

Ա. ՄԱՐԳՈՒՐՍ  
Գ. ՅՈՒԳՆ

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄԵՐՈՒ  
ԿԱՏԱՐԵՆՔ ՈՒ ԳԵՐԱԿԱ-  
ՏԱՐԵՆՔ ԲՈՒՆԵՎԻԿԱՆ  
ՅԵՐՐՈՐԴ ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ  
ՊԼԱՆՆԵՐԸ

ԳԻՆԸ 20 ԿՈՔ  
Цена 20 коп.

# ԵՊԻ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՐՐՈՐԴ ԳԱՐՈՒՆ

Թարգմ. և ՄԱԶՄ.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИКО-ЯЗЫКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

631.1

Մ-35

ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
«ՇՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

04 AUG 2011 32-11  
913

631.1  
ԼՄ-35

# ԴԵՊՒ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ 3-ՐԴ ԳԼՐՈՒՆ

Թարգմ. Հ. Մազմ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОЕ АЗИИ  
и Африки  
Академии Наук  
СССР

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Առանց արտադրական պլանի չի կարող աշխատել վոչ մի գործարան, վոչ մի ֆաբրիկա: Առանց արտադրական պլանի չի կարող և չպետք է աշխատի վոչ մի կոլտնտեսություն: Ամեն մի ձեռնարկություն համար արտադրական պլանը—դա գործողությունների պարզ ծրագիրն է, դա մի հաստատ ճանապարհ է տնտեսությունը բարելավելու, նրա յեկամուտները բարձրացնելու համար:

Վերցնենք յերկու կոլտնտեսություն, վորոնք միատեսակ մեծություն ունեն—«Կրասնի Յար» և «Փարոս»: Յրանք իրարուց հեռու յեն վեց կիլոմետր: Դժվար չի համոզվել, վոր շատ մեծ առավելություններ ունի այն կոլտնտեսությունը, վորն ունի լավ կազմած արտադրական պլան:

Այսպե՛ս որինակ, «Կրասնի Յար» կոլտնտեսությունն անցյալ տարի ուներ լավ մշակված և խորը մտածված արտադրական պլան՝ 1931 թվի համար: Կոլտնտեսականները նախատեսեցին և ճշգրիտ հաշվի առան իրենց բոլոր յեկամուտներն ու ծախսերը: Այս պլանը հարվածայնորեն կատարելու հետևանքով, նրանք ամեն մի աշխատանքային օրվա համար կարողացան ստանալ 1 օուրվի 60 կոպեկ յեկամուտ:

Իսկ հարևան կոլտնտեսության մեջ—«Փարոսում», վորտեղ արտադրական պլանը լավ չի կազմված, մեկ աշխատանքային օրվան հասավ.. 54 կոպեկ: «Փարոս» կոլ-

12.5.06.2013  
2007.06.02

15618

տնտեսութեան արտադրողականութեանը հաճախորդ եր  
«Կրտսնի Յար» կոլտնտեսութեան արտադրողականութեան  
մեկ յերրորդ մասին: \*)

Այստեղից պարզ է, վոր առանց պլանի չի կարելի  
տնտեսութեանը կանոնաւոր վարել:


Մինչև անգամ անհաս տնտեսութեանները, սրանք էլ  
նոր տարին մտան թե չե, կազմում են իրենց պլանները—  
ինչքան պիտի ցանեն, ինչ պիտի ցանեն, մտաւորապես  
ինչքան բերք կհավաքեն և այլն: Այս բոլորն ավելի ևս  
անհրաժեշտ է խոշոր, կոլեկտիվ տնտեսութեան համար:

Կոլտնտեսութեան արտադրական-ֆինանսական պլանը  
չպետք է կարինտններում կազմվի: Պլանի կազմելուն պետք  
է ակտիվ մասնակցութեան ունենալն հենց իրենք, կոլտնտե-  
սականները: Եւրոպայում կիրառու է մտաւորական  
պլանը քվեքի յեղ տաքադրութեանցի ցուցակ է միայն:  
Իսկապես արտադրական պլանը միխրոնաւոր մարկանց կեն-  
դանի յեղ պրակտիկ գումար յարկումն է: Մեր արտադրական  
պլանի ձեւը ինչպէս—դա միխրոնաւոր աշխատավորներն են,  
վորոնք սեղծում են նոր կլանքը:

Մեր կուսակցութեան առաջնորդ ընկեր Ստալինի  
այս խոսքերը մի ավելորդ անգամ հաստատում են, վոր կոլ-  
տնտեսութեանների արտադրական պլանները պետք է ան-  
պայման քննարկվեն կոլտնտեսականների ժողովներում,  
բրիգադներում, ողակներում, խմբակներում: Զպիտի լինի  
վոչ մի կոլտնտեսական, վորը չգիտենա իր կոլտնտեսու-  
թեան արտադրական պլանը:

Կոլտնտեսութեան արտադրական-ֆինանսական պլանը  
կազմվում է պետական առաջադրութեանների հիման վրա,  
հաշվի առնելով տնտեսութեան մասնագիտացումը: Ամեն մի  
կոլտնտեսութեան պետք է առաջուց գիտենա, թե պլանա-  
յին առաջադրութեանների հիման վրա, նրա տնտեսութեան  
վոր ճյուղն է զիստավոր:

\*) Այս որինալը վերջում է ընկեր Ստալինի ձեռքից, վոր արտա-  
սանել է խորհուրդների Եւրոպայում:



61296-67

Որինակի համար, Նովոչերկասկի ռայոնում արդեն բո-  
լոր կոլտնտեսականներին հայտնի չե, վոր Արպաչինսկու, Բո-  
գաևսկու, Կրիվյանսկու և Մանիչևսկու գյուղխորհուրդների  
կոլտնտեսութեանները բանջարեղենային-կաթնային ճյուղ-  
ներն են զարգացնելու: Իսկ Միչկինսկու, Բրոշևսկու, Կրաս-  
յուկովսկու և Կամենոբրոդսկու գյուղխորհուրդների կոլտնտե-  
սութեանները զարգացնելու յեն պտուղների, բանջարեղենի  
ու կաթնային ճյուղերը:

Այսպիսով հիշյալ ռայոնի ամեն մի կոլտնտեսութեան  
գիտե, թե զալիք տարում ինչի վրա պետք է առանձին ու-  
շագրութեան գարձնի: Ճիշտ վորոշելով իրենց տնտեսութեան  
հիմնական ճյուղը, կոլտնտեսականները ճշտութեամբ ել  
կկազմեն իրենց արտադրական-ֆինանսական պլանը:

Ինչպես կազմել արտադրական պլանը: Ամենից ա-  
ռաջ յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ պետք է կազ-  
մակերպվի պլանային հանձնաժողով: Հանձնաժողովի մեջ  
մտնում են տնտեսութեան բոլոր ճյուղերի բրիգադներն  
ու զեկավարները: Հանձնաժողովին նախագահում է կոլ-  
տնտեսութեան վարչութեան այն անդամը, վորը վարում է  
տնտեսութեան հիմնական ճյուղը: Բացի ամբողջ կոլտնտե-  
սութեան պլանային հանձնաժողովից, արտադրական պլան  
կազմելու համար պետք է հատուկ հանձնաժողովներ ստեղծ-  
վեն տնտեսութեան ամեն մի ճյուղի համար (կենդանաբու-  
ժական, բանջարանոցային և այլն):

Այս հանձնաժողովները մասնաճյուղերի արտադրական  
խորհրդակցութեանների հետ միասին քննում են զալիք  
տարում իրենց տնտեսութեան մասնաճյուղերի զարգացման  
պլանները: Մինչև ուղն ու ծուծը քննելով իրենց արտա-  
դրական հնարավորութեանները, կոլտնտեսականները պետք  
է մի շարք հանդիպական առաջարկներ անեն իրենց տնտե-  
սութեան բարելավման մասին:

Ստուգիչ թվերն արդեն պետք է մշակված ու կազմված  
լինեն:

Պանային հանձնաժողովն արտադրական հանձնաժողովներին հետ միասին պետք է մինչև այդ ժամանակը մշակել մշակույթի նորմաները և սրանց զնահատումն աշխատանքային որերով:

Պետք է ծրագրվեն մի շարք կոնկրետ ազդոտելիսի-հական միջոցառումներ, թե ինչպես բարձրացնել արտերթքերը, ինչպես անել, վոր կովերը շատ կաթ տան, իսկ վոչ-խարները—շատ բուրգ, ինչպես չաղացնել կենդանիներին:

Հարկավոր է ճիշտ չափեր վորոշել սերմացու ցանելու, կենդանիներին կեր տալու համար, կուլտուրաները բաժանել ցանվելիք հողամասերի համեմատ, հաշվի առնել ուղիղ ցանքավորության անցնելը:

Կուլտուտեսուությունները հենց հիմա պետք է նշեն տշխատանքի կազմակերպման ճիշտ կարգն ու ձևերը, վորոնք ապահովում են գործավարձի անշեղ կիրառումն ու դիտարկության (արեզլիչկայի) վերացումը: Մի խոսքով, ամենաուշը մինչև փետրվարի մեկը պետք է կազմվի արտադրական-ֆինանսական պլանը: Փետրվարի 15-ից վոչ ուշ այդ պլանը գարնանային գյուղատնտեսական կամպանիայի գործնական միջոցառումների հետ միասին պետք է քննվի կուլտուտեսուության ընդհանուր ժողովում, բրիգադներում, խումբակներում և ողակներում:

Այն կուլտուտեսուությունները, վորոնք սպասարկվում են մեքենա-տրակտորային կայաններով, արտադրական պլանները կազմում են այդ կայանների վերատեսչության (դիրեկցիայի) ղեկավարությամբ: Իսկ այն կուլտուտեսուությունները, վորոնք մեքենա-տրակտորային կայանների գործունեության ռայոններից դուրս են գտնվում, իրենց պլանները կազմում են ռայկոլխոզմությունների ղեկավարությամբ:

Ճշգրիտ կազմված, խորը մտածված, ճիշտ արտադրական պլանը—դա մի կենդանի ղեկավարություն է գործին: Այսպիսի պլանն ամենաճիշտ գրավականը կլինի կուլտուտեսուությունների կազմակերպչական-տնտեսական հաջողակ աճքայնդման համար:

Մենք դիտենք, վոր այն կուլտուտեսուությունները, վորոնք 1931 թվականը դիմավորեցին լավ պլաններով, այդ աարվա բոլոր տնտեսա-քաղաքական կամպանիաներից հաղթող դուրս յեկան:

Ահա ձեզ որինակ, Յեսյեի ռայոնի «Կարմիր պարտիզան» կուլտուտեսուությունը: Այս կուլտուտեսուության արտադրական պլանից տեղյակ եյին՝ ամեն մի բրիգադա, ամեն մի խմբակ, ամեն մի կուլտուտեսական: Մինչև անգամ յերեքաներն ել դիտելին իրենց կուլտուտեսուության արտադրական պլանը, վորովհետև նրանք այդ ուսումնասիրել եյին գպրոցում:

Պլանի համաձայն, կուլտուտեսականները լավ դիտելին, վոր իրենց գարնանացանը բռնելու յե 6 հազար 688 հեկտար տարածություն: Յուրաքանչյուր բրիգադայի կողմից առաջարկվել եր նակ հանդիպական պլան: Այսպիսով աճքողջ գարնանացանը կազմում եր 7 հազար 788 հեկտար տարածություն: Սրանից գարի, վարսակ և կորեկ պիտի ցանվեր հազար 672 հեկտար, արևածաղիկ—2 հազար հեկտար, յեզիպտացորեն— հազար 350 հեկտար, լոբի և սիսեռ—200 հեկտար, պարտեզ (բախչա)—250, բանջարանոց (բոստան)—145, զանազան խոտեր—հազար հեկտար և այլն: «Կարմիր պարտիզան» կուլտուտեսուության մեջ աշխատացան պիտի արվեր 8 հազար հեկտար:

Պլանի համաձայն, տնտեսության կենդանաբուծական ճյուղը պետք է զարգանար հետևյալ կերպով.—զանազան անասունների և թռչունների թիվը պետք է ավելանայ համարյա թե 6 անգամ:

Կուլտուտեսականները ծրագրել եյին տարվա վերջում ռեննալ 684 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, 1534 խոզ, 1648 գլուխ վոչխար, 2315 ճագար (կրոլիկ) և 16 հազար զանազան թռչուններ:

Բացի դրանից, «Կարմիր պարտիզանի» կուլտուտեսականները ծրագրել եյին ցանել 145 հեկտար բանջարանոց:

կոլտնտեսականները հենց տեղն ու տեղը պլանում նախատեսել էյին, թե ի՞նչ և ինչքան պիտի հանձնեն պետութան: Որինակ, ծրագրված որ հանձնել 2400 ցենտներ կաղամբ, 2160 ցենտներ տոմաթես (տոմատ), 550 ցենտներ դազար, 1300 ցենտներ վարունկ, 750 ցենտներ սոխ ու ճակնդեղ և այլն:

Կոլտնտեսութան արտադրական-ֆինանսական պլանը նախատեսում էր մի շարք կոնկրետ ազրո-զոոտեխնիկական (այսինքն թե հողագործական և թե կենդանաբուծական) միջոցառումներ: Ծրագրվում էր ցանքափոխութան մեջ մտցնել նաև խոտացանը (ցանել 1000 հեկտար խոտ), հարյուր տոկոսով մաքրել և ախտահանել սերմացուները, ձյունը պահել գաշտերում (ինչքան հնարավոր է, վորպեսզի հողը շատ խոնավություն ձօժի), կառուցել խողանոցներ, կովանոցներ և այլն:

Այս պլանն ոգնեց կոլտնտեսութան, վորը հաջողությամբ կատարեց բոլոր նախատեսած աշխատանքները:

Հացամթերումների, դարնանացանի և աշնանացանի, աշնանավարի—այս բոլորի պլանները «Կարմիր պարտիզան» կոլտնտեսությունը պատվով կատարեց: Յեղ դա հասկանալի չէ. չէ՞ վոր կոլտնտեսությունը կուրորեն չէր աշխատում: **ՆԱ ՊԱՆԸ ՁԵՆՔԻՆ ԲՈՒՍԾ, ԳՐՈՀՈՒՄ ԵՐ ԴԱՇՏԵՐԸ:** Յուրաքանչյուր կոլտնտեսական արդեն առաջուց գիտեր, թե վորտեղ և ինչ պետք է ցանվի, յէրբ, վճրտեղ և ի՞նչ պետք է անել:

Ունենալով արտադրական պլան, յուրաքանչյուր բրիգադա կարող է և պետք է մարտականորեն ծավալել դարնանացանի նախապատրաստությունը: Դմիտրի Պետրովիչ Սալովը, «Կարմիր պարտիզան» կոլտնտեսության 4-րդ հարվածային բրիգադայի ղեկավարը գիտեր, վոր պլանի համաձայն, նրան տրվում էր 200 ձի, 43 դուբան, 18 ցանիչ, 54 սայլ, 6 տակառ և այլն: Բրիգադային տրված էր ցեխտեյալ առաջադրությունը.—ցանել 1500 հեկտար, վորի

300 հեկտարը— յեղիպատացորեն, 500-ը—արեածաղիկ, 100-ը—կորեկ, 200-ը—վարսակ, 125-ը—գարի և 250-ը—դանազան խոտեր:

Արտադրական պլանը կազմելուց հետո, հենց մյուս օրը Սալովը հրավիրեց խմբակավարներին, ցանվորներին, դուբանավորներին արտադրական խորհրդակցություն և նրանց հետ միասին, գյուղատնտեսի ողնությամբ նշեցին աշխատանքի պլանը: Արդեն այս պլանից յերևաց, վոր վարսակի հողամասն ընկնում է Կլիմենկովի խմբակին, իսկ ցորենը ցանում է Անդրեյ Զելենակու խմբակը և այլն:

Ամեն մի խմբակի տրվեց վորոշ քանակություն խմբակներ, լծկան, սերմացու, կեր, մի խոսքով—թեկուզ հենց մյուս օրը դաշտ դնա: «Կարմիր պարտիզան» կոլտնտեսության անդամները խստորեն կիրառում էյին գործավարձը, աշխատում էյին հարվածային կերպով և հարվածայնությամբ կատարեցին դարնանացանի պլանը:

Ամեն տարի ավելանում է Հյուսիսային Կովկասի ցանքերի տարածությունը: Նախանցյալ տարի մենք դարնանացան արինք 7.700.000 հեկտար, անցյալ տարի—8.650.000 հեկտար, իսկ այս տարվա դարնանը մենք պետք է ցանենք 9.030.000 հեկտար:

Յեթե կոլտնտեսությունները նախանցյալ տարի ցանել էյին ամբողջ դարնանացանի 59 տոկոսը, ապա անցյալ տարի նրանք ցանեցին 87 տոկոս, իսկ այս տարի նրանք խորհրդային անտեսությունների հետ միասին պիտի ցանեն Հյուսիսային Կովկասի ամբողջ դարնանացանի 95 տոկոսը:

Ահա թե ինչպես մենք որե-ցտարի, մեր կուսակցության ղեկավարությունը, ավելացնում ենք ցանքերի տարածությունները, լավացնում ենք կոլտնտեսականների բարեկեցությունը, ամրապնդում ենք աշխարհումս առաջին պրոլետարական պետության հզորությունը:

Սակայն այդ քիչ է: Ճանքերի տարածություններն ավելացնելու հետ միասին մենք պե՛տք է բարձրացնենք մեր դասերի բեքստվուրյունը:

Հնգամյակի 4-րդ տարում մեր յերկրամասը հարստանում է տասնյակ նոր մեքենա-տրակտորային կայաններով, հարյուրավոր, հազարավոր ցենտներ հանքային պարարտացուցիներով, տասնյակ հազարավոր փութ տեսակավոր սերմերով, տասնյակ միլիոնների արժողութեամբ գյուղատնտեսական մեքենաներով ու գործիքներով:

Սորհրդային իշխանութեան այս բոլոր միջոցառումներն ամենաուղիղ գրավական են կոլտնտեսական ու խորհրդային տնտեսական դաշտերի բերքատվութունը բարձրացնելու համար, կոլտնտեսութունների կազմակերպչական-տնտեսական ավարակցման համար:

Իրենց հերթին կոլտնտեսականները պետք է այժմ հարվածայնորեն սկսեն կազմել արտադրական-ֆինանսական պլանները: Մարտականորեն պատրաստվելով դարնանացանին, նրանք պետք է գրոհեն միւր գաշտերը հազարավոր հանդիպական պլաններով:

### ՊԱՏԵՐԱՉԱ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Աշխատանքի ուղիղ կազմակերպումն այն հարցն է, առանց վորի լուծման անհնարին է կոլտնտեսութունների հետագա ամրապնդումը»:

Մեր յերկրագործութեան ժողովրդական կոմիսար ընկ. Յակովլևի այս խոսքերը, վոր բերում ենք խորհրդների 6-րդ համագումարում արտասանած նրա ճառից,—այժմ առանձնապես կարևոր նշանակութուն են ստանում: Ինչո՞ւ: Վորովհետև աշխատանքի կազմակերպումից առաջին հերթին, հետևած է ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՆԴՈՒՄԸ:

Իսկապես, վերցնենք գործավարձը: Նախանցյալ տարի գործավարձը շատ կոլխոզներում գեռ չեր մտցված: Յե՞վ շարունակ լինում էին դեպքեր, յերբ բարեխիղճ աշխատող կոլտնտեսականները նոյնքան յեկամուտ էին ստանում, վորքան թամբալներն ու սիմուլյանտները: Շատ անգիտակից կոլտնտեսականներ և կոլտնտեսակիներ դատում էին

այսպես. «Ել ինչո՞ւ աշխատանքի գնանք, յերբ միևնույն է, հացը կստանանք»: «Քանի շունչ ունենք, այնքան էլ հաց կստանանք»—ասում էին մյուսները:

Կոլտնտեսականների աշխատանքի գնահատման մեջ այսպիսի «հավասարեցումը» (ուրա՞ջիլովկա) ձեռնտու յե կուլակներին և նրա կողմնակիցներին: Մեր դասակարգային թշնամիները հասկանում էին, վոր այսպիսի պայմաններում կոլտնտեսութունը կքայքայվի, կոլտնտեսականները նորից հրոնեն իրենց մենատնտեսական մածը, իսկ իրենք, կուլակները, նորից կնստեն չքավորութեան վզին:

Ահա թե ինչու կուլակները կաշուց դուրս էին գալիս, աշխատում էին (հիմա յեկ աշխատում են) «հավասարեցում» քարոզել, աջակցել թամբալներին ու սիմուլյանտներին, մի խոսքով, բոլոր նրանց, ով իր արարքներով այսպես թե այնպես քանդում է կոլեկտիվ տնտեսութունը:

Այստեղից էլ պարզ է, վոր կոլտնտեսութուններում աշխատանքի ճիշտ կազմակերպումը հնարավոր է միայն գործավարձի հիման վրա: Սորհուրդների համամիութենական 6-րդ համագումարն իր վորոշումներում հենց այսպես էլ ասաց,—

«ՈՎ ՇԱՏ ՅԵՎ ԼԱՎ Ե ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՅԵՆ ԾԱՏ Ե ՍՍԱՆՈՒՄ. ՈՎ ԶԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՎՈԶԻՆԶ ԶԻ ՍՍԱՆՈՒՄ»:

Աշխատանքի ճիշտ կազմակերպում նշանակում է վոչ միայն անշեղորեն կիրառել գործավարձը, այլ և ԱՄԲՈՂԶՈՎՄԻՆ ՎՈԶՆՉԱՑՆԵՆ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ: Դիմագրկութունը, դա արտելային տնտեսութեան ցեցն է: Պատրաստվելով զարնանացանին, ամեն մի կոլտնտեսական պետք է վաղորդ գիտենա, թե վճիր ցանիչով, կամ վճիր գութանով պիտի աշխատի: Յեթե, ասենք թե, կոլտնտեսական Կիրակոսյանին առաջուց հայտնի յե, վոր նա պիտի աշխատի № 256 գութանով, ապա նա հոգս կքաշի, վորպեսզի այդ գութանը լավ պահվի, չժանգոտվի, խոփերը կարգին լինեն:

Մի խոսքով, № 256 գուժանն անտեր չի լինի, նա կունենանա իրեն նայող, վորը նրա համար պատասխանատու չե ամբողջ կոլտնտեսութեան առաջ:

Ամեն մի ցանկով պետք է գիտենա իր ցանիչը, ամեն մի գուժանավոր—իր գուժանը, ամեն մի ձիաշահ—իր ձիայերին:

Արդեն այժմ կոլտնտեսականը պետք է ստուգե, թե այս կամ այն խմբակում ու բրիգադայում ինչպես է վերացված դիմազրկութիւնը: Ընդհանուր ժողովում, կամ արտադրական խորհրդակցութեանը, դարնանացանի պլանը քննելիս, պետք է հաստատվի ձիերի, գուժանների, ցանիչների և նրանց ամբողջած կոլտնտեսականների ցուցակը: Գիմազրկութեան վերացումն ամենալավ դրավականն է գարնանացանի հաջող անցկացման, դարնանային դաշտային աշխատանքների պլանի կատարման ու գերակատարման:

Տարասովսկի ռայոնի Տարասովսկայա գյուղի «Մլյէչի պատգամները» կոլտնտեսութեան անդամներն արագ և լավ կատարեցին աշնանացանի և աշնանավարի պլանը, վորովհետև նրանք դաժան պատերազմ հայտարարեցին դիմազրկութեան: Ժողովի հաստատած ցուցակի համաձայն, ամեն մի կոլտնտեսական, աշնանավարի ամբողջ ժամանակ պետք է աշխատի վորոշ գուժանով և ձիով: Այդ ցուցակի շնորհիվ, գուժանավոր Գոլշանսկի Նիկոլայը վաղորոք գիտեր, վոր իր ձի քողը Գոլշանսկի Միխայիլն է, իսկ ձիերը— «Միվկան», «Վեներան», «Մերինը», «Սեուկը» և այլն: Այսպես հայտնի յեին և բոլոր մնացած գուժանավորները, ձի քողներն ու ձիայերը:

**ԴԱՇՏԵՐՈՒՄ ԶԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ**

Յուրաքանչյուր կոլտնտեսական նախ քան զաշ գուրս գալը պետք է լավ իմանա յերկու բան.—

Ի՞նչ արտադրական առաջադրութիւն է ստացել նրա խմբակը, բրիգադան և—

Ի՞նչ պետք է անի ինքը, կոլտնտեսականը:

Կարճ ասած՝ առաջուց պետք է կազմված լինի պլան— նարյաղը, վորի մեջ արդեն ձիշտ ասված կլինի, թե բրիգադան, վորն ունի այսինչ քանակութեամբ ձի, այսքան գուժաններ, տափաններ, ցանիչներ, պետք է այսինչ ժամանակվա ընթացքում վարե, տափանն և ցանն այսքան հեկտար:

Լավ գիտենալով պլան-նարյաղը, կոլտնտեսականները կուրորեն չեն աշխատի: Նրանցից յուրաքանչյուրը ձիշտ և պարզ պատկերացում կունենա, թե տվյալ ժամանակվա ընթացքում բրիգադան ի՞նչ աշխատանք է կատարելու:

Հարկավոր է այնպես անել, ինչպես արին անցյալ տարի կազայնիցկայա գյուղի «Հնգամյակ» արտելի կոլտնտեսականները: Ամեն մի գուժան, ամեն մի ցանիչ իրենից ներկայացնում էր տուանձին խմբակ: Այստեղ պլան-նարյաղն սկզբում կազմվեց բրիգադայի համար, իսկ հետո— ամեն մի տափանի և ցանիչի համար:

Որինակ, բրիգադայում կա 9 ցանիչ (12 շարքանի) և սրանց համար 54 ձի (հերթով աշխատելիս): Հետևապես, յեղնելով նրանից, վոր յուրաքանչյուր ցանիչ, համաձայն ընդունված նորմաների, որական պիտի ցանի 5 հեկտար, ուրեմն բոլոր ցանիչներն որական պիտի ցանեն 45 հեկտար: Իսկ բրիգադան ստացել է առաջադրութիւն— ցանել 225 հեկտար: Դուրս է գալիս ուրեմն, վոր բրիգադան իր առաջադրութիւնը պիտի կատարի 5 օրվա ընթացքում:

Գիտենալով բրիգադային պլան-նարյաղը, կազայնիցիու կոլտնտեսականներն արտադրական առաջադրութիւնը հեշտութեամբ հասցրին մինչև ամեն մի ցանիչ, ամեն մի գուժան:

Տվյալ դեպքում արդեն հայտնի յեր, թե քանի վոր ցանիչն որական պետք է ցանի 5 հեկտար, ապա 5 օրվա ընթացքում նա կցանի հինգ անգամ ավելի— այսինքն 25 հեկտար:

Այսպիսով, վերացնելով դիմազրկութիւնը, կազայնիցիու կոլտնտեսականներն առաջուց գիտեցին, թե ճիշ

վոր ցանիչի վրա պիտի աշխատի: Ձի քրոզները գիտեյին իրենց ձիերին և բացի դրանից, յուրաքանչյուր ցանվոր և ձի քրոզ գիտեյին, թե նրանք ընդամենն ինչքան պիտի ցանեն և այդ աշխատանքի համար նրանք ինչքան աշխատանքային որեր կտանան:

Յուրաքանչյուր կոլտնտեսական հենց այժմ պետք է ճիշտ և պարզ պատկերացում ունենա, թե դաշտում աշխատելու ժամանակ ինչպես պիտի դասավորված լինեն գութանները կամ ցանիչները, վորպեսզի ամենամեծ արդյունքն ստացվի:

Այստեղ դարձյալ պետք է հաշվի առնել առանձին կոլտնտեսությունների փորձերը:

Այսպես, որինակ, Տարասովսկայա գյուղի կոլտնտեսության մեջ ամբողջ ցանքսային տարածությունը բաժանված եր վանդակների: Յուրաքանչյուր վանդակ իրենից ներկայացնում եր ուղիղ քառակուսի, վորի կողմերը հաճասար եյին հազար մետրի (կիրոմետր): Այսպիսի քառակուսիում կա 100 հեկտար: Վանդակը բաժանված է 20 մասերի, ամեն մեկում 5 հեկտար: Ահա այսպիսի մի մասն ել տրվում եր մեկ գութանին: Այս եր մեկ գութանի առաջադրությունը, վորը պիտի կատարվեր ըստ մշակույթի նորմաների (2 խոփանի գութանին մեկ ու կես հեկտար) — յերեք որվա ընթացքում:

Բոլոր կոլտնտեսություններն ու կոլտնտեսականներն առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնեն դաշտում մեքենաների ու գործիքների ճիշտ դասավորման:

Մեքենաները պետք է այնպես դասավորվեն, վորպեսզի ստացվի ամենամեծ արտադրողականություն, միևնույն ժամանակ պահպանվի աշխատանքի լավագույն վորակը:

Ահա թե ինչու անպայման պետք է հաշվի առնվեն առաջավոր կոլտնտեսությունների փորձերը:

Իսկ բրիգադներն ինչպես պիտի դասավորվեն գաշտում: Այնպես, վոր հեշտությամբ կիրառվի մանր-խմբային, անհատական...

գործավարձը: Բրիգադների դասավորությունը պետք է հնարավորություն տա լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը գութանների և ցանիչների միջև և վոր գլխավորն է, ստուգել այդ մրցումը և հայտնաբերել առաջավորներին ու յետամնացներին:

### ՎՈՐԱԿ ԿՍՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ Ե

Գործավարձը պետք է հաշվի առնի վոչ միայն կատարված աշխատանքի քանակը, այլ և վորակը: Բավական չէ վարել, հարկավոր է, վոր այդ վարը լավ լինի, վորպեսզի համապատասխանի դյուրատնտեսական գիտության բոլոր պահանջներին:

Մենք պետք է այնպես անենք, վոր կոլտնտեսական դաշտերը բարձր բերք տան: Մենք պետք է աշխատենք, վոր այնտեղ, վորտեղ մեկ հասկ է բուսնում, յերկու հասկ բուսնի: Պետք է կրկնապատկել, յեռապատկել կոլտնտեսական դաշտերի բերքը:

Իսկ այս բոլորը հնարավոր է միայն վորակային ցուցանիչները կատարելու պայմանով:

Այս պատճառով առաջիկա ցանքային կամպանիային յուրաքանչյուր բրիգադա, բանվորական պլան-նարյադի հետ միասին, կստանա նաև ազդրոնոմիական պլան-նարյադ, վորի մեջ պարզ ցույց կտրվեն վարի ու ցանքի վորակային ցուցանիչները:

Որինակ, դուժանավորը ստացել է մեկ ու կես հեկտար նորմա: Այս նորման կատարելու համար նա պետք է ստանա 1 աշխատանքային որ: Բայց այս աշխատանքային որը նրա վրա կգրվի միայն այն դեպքում, յեթե նա կատարե վարի բոլոր վորակային ցուցանիշները, որինակ, յեթե նա խամ տեղեր չլիժողնի, յեթե վարի խորությունը նորմալ լինի, յեթե ընդհանրապես, վարի ընդհանուր բնույթը բավարար լինի:

Իսկ յեթե դուժանավորը լավ չի վարել, ապա, չնայելով նորման կատարելուն, նրան լրիվ աշխատանքային որ չին տա: Վերջապես, յեթե նա աշխատանքը շատ վատ է կատարել, ապա նրա վրա ավելի քիչ կգրեն:

Պայքարել վորակի համար—նշանակում է պայքարել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամբողջական համար:

Կուլակության ֆուգոյները փորձ կանեն ամեն կերպ վիժեցնել կոլտնտեսական աշխատանքների վորակը: Այն կոլտնտեսականը, վորը սխտեմատիկորեն չի կատարում վորակային ցուցանիշները, ոգնում է դասակարգային թշնամուն, կոլտնտեսության գորեղությունն և ամբուլթյունը թուլացնելու: Այս տեսակ մարդիկ խայտառակում են կոլտնտեսականի անունը: Նրանք պետք է հանձնվեն ընկերական դատի, վորը պարտավոր է խստորեն դատել նրանց, արտելի աշխատանքների վորակը վիժեցնելու համար:

ВХОДНО-ИЗЫСКАТЕЛЬСКОЕ  
 ИСТОРИЯ  
 ДОКТОРА ДЕННИ  
 Рязанский Гай

Կարևորագույն է վոչ միայն քանակը, այլ և վորակը, ահա մի խնդիր, վորը պարտական է կատարել յուրաքանչյուր կոլտնտեսական:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Տեխնիկական պատճառներով եջերի հերթական համարակալումը (եջ 14—22) սխալ է տպվել:

40-րդ եջում

«Մաքուր սերմացու ցանենք» գլխի վերջին աբզացում սերմացուների տեսակավորման փոխանակելու տպված ժամկետների փոխարեն

Կարդալ

Սերմացուների տեսակավորման փոխանակելը բոլոր ուսյուններում ավարտել մինչև փետրվարի 1-ը: Հրատարակչություն

ԿՐԿՆԱՊՍԱԿԵՆՔ, ՅԵՌԱՊՍԱԿԵՆՔ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԸ

«Փանի վար մեմ վնեցիմ պեսական յով կոլեկտիվ խոսոք սնեսուրյուն սեղծելու խնդիրը, ուրեմն պեժ է բուշեվիկտեմն ձեռնարկեմն բարձր բեբ ասանալու խնդրի յուժմամբ, կիրառելով... գյուղացնեսական գիտության բուրնվաճումները»:

Այսպես սասց հողագործութեան ժողովրդական համար ընկեր Յակովլեվը Հողօրդկոմատի աշխատողներէ ե գյուղատնտեսութեան գիտական գործիչներէ խորհրդակցութեանը:

Յեվ ընկեր Յակովլեվի այս խոսքերին ամեն մի կուտնտեսական պետք ե պատասխանե՛

Այո, «աստծո կամքի» վրա հուշս դնելու ժամանակն անցել ե: Պապերի ու տերտերներէ այն ցնդաբանութեանը, թե «աստնց աստծո վոչինչ չի լինի», — ապրում ե միայն անհատական թույլ տնտեսութեան միջ: Իսկ կուտնտեսութեան, այսինքն խոշոր, սոցիալիստական հողագործութեան մեջ այդ հիմարութեանը ե՛ ծիծաղելի ե՛ անհանգուրժելի թե:

Կուտնտեսութեանները պետք ե բարձր բերք նվաճեն կոլեկտիվ աշխատանքով ե ազրոնոմիական (գյուղատնտեսական) գիտութեան ու տեխնիկայի ոգնութեամբ: Ազրոտեխնիկային տիրապետելու մասին կուտնտեսութեան նետած լոզունգը պետք ե իրականացնե ամեն մի կուտնտեսական ե ամեն մի կուտնտեսուհի:

Ցանքին պատրաստվելու ժամանակամիջոցում յուրաքանչյուր կուտնտեսական պետք ե աշխատի տիրապետել ազրոտեխնիկային ե բոլշեիկորեն վճռի այդ խնդիրը:

Կուտնտեսականն ինչ պետք ե անի ձմեռը, վորպեսզի նրա կուտնտեսութեանն ազրոտեխնիկական ձեռնարկումներէ պլանը լցնե ազրոնոմիական բովանդակութեամբ: Ահա այն ազրոտեխնիկական հաշիվը, վոր կուտնտեսականին ե ներկայացնում բարձր բերքի համար ձեռնարկված արդավը:

Կուտնտեսութեաններում պետք ե ծավալել մասսայա-

կան ազրոտեխնիկական ուսուցում: Առաջավոր կուտնտեսութեաններն արդեն ձեռնարկել են այդ խնդրի լուծմանը: Յեա մի որինակ:

Ստարոմինսկու «Լենինյան ուղի» բարեկն արդեն խոսքից դործի անցավ ե, ինչպես ասում են, մի անգամից դոտավ դործի ուղն ու ծովը: Կուտնտեսականները պարտադիր ազրոտեխնիկական ուսուցում հայտարարեցին արտելի բոլոր անդամներէ համար: Բրիգադիրներն ե ողակապետերը սովորում են կուտնտեսական արտագրութեան ե ազրոտեխնիկայի յերեկոյան դպրոցներում: Մնացած կտիվն ու բոլոր կուտնտեսականները սովորում են կարճատե կուրսերում:

Յուրաքանչյուր կուտնտեսական պետք ե պայքարե, վորպեսզի նրա կուտնտեսութեան մեջ ծավալվի մասսայական ազրոտեխնիկական ուսուցում, վորպեսզի ինքն ել հնարավորութեանն ստանա անհրաժեշտ ազրոտեխնիկական գիտելիքներով դինվելու: Այս բանն առանձնապես անհրաժեշտ ե կուտնտեսական արտագրութեան հրամանատարներէ — բրիգադիրներէ ե ողակապետերի համար:


Կազմակերպեցեք յերեկոյան դպրոցներ ե կարճատե կուրսեր: Հսեցեք գյուղատնտեսների դասախոսութեանները, կարդացեք անհրաժեշտ գրքեր, վորպեսզի բաց անեք այն «չազանիքները», վորոնց յետե թագնված են դեպի բարձր բերք տանող ճանապարհները:

Հարկավոր ե իմանալ առանձին կուլտուրաների բոլոր պահանջներն ու շրջանաճառները, սովորել բավարարել այդ պահանջներին, վորպեսզի ստիպել բույսերին այնպիսի բերք տալ, վորը համապատասխանում ե կուտնտեսութեան:

### ԻՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ ե գիտենալ, վոր մեր յերկրամասի չորային դոտում (հյուսիսային ե հյուսիս-արևելյան ուսյոններում) խոնավութեան 20 սոկայտ դասիցում ձյունից ե լինում:

61296-67



Մենք սովորել ենք տանել յերաշտի հարվածները, իսկ խոնարհությունը պահպանել չենք սովորել:

Յերբ գարնանը ձյունը հալում է, այդ թանկագին խոնավության 80 տոկոսը հեղեղվում-գնում է դաշտերից: Յե՛վ սա լինում է այնտեղ, ուր ամառվա շոգին դաշտերը ծարավում, պապակում են, իսկ շուր չկա ու չկա:

Խոնավության այսպիսի կորուստը, բույսերի կենսական հյուսվածքի այդ բարբարոսական վատնումը կարող է ինչ համբերել միայն անհատական տնտեսությունները: Այդ համբերում է ինչն նաև կոլտնտեսություններն իրենց գոյության առաջին շրջանում:

Այժմ, յերբ բերքի համար մղվող պայքարը կոլտնտեսությունների հիմնական ու կենտրոնական խնդիրն է, պետք է գարնանային ջրերը յենթարկել կոլտնտեսականների կամքին, չթողնել, վոր նրանք հոսեն ու փախչեն, այլ նրանցով տնեցնել հողը, վորպեսզի մեր ցանքերը լավ բուսնան ու զարգանան:

Ինչպես անել այդ: Ամենահասարակ ու մատչելի յեղանակով—ձյունը պահելով: Պետք է ձյունը պահել դաշտերում, թող նա ամբողջովին հալչի աշնանացանի վրա և այն տեղերում, վորտեղ պետք է գարնանացան արվի: Ձյունը պետք է հալչի այնպես, վորպեսզի ամբողջ խոնավությունը չհեռանա այնտեղից, վորտեղ նա հարկավոր է:

Միլլերովոյի ռայոնի կոլտնտեսությալներն արդեն սկսել են պայքարը ձյունի խոնավության համար: Մինչև ձյան գալը նրանք յերկար պատրաստվում էին ձյունը պահելու աշխատանքներին: Փոմինսկու, Նովո-Պլատովսկու և Ն. Ոյլխովսկու կոլտնտեսությունների դաշտերում շարքահերկ (պրոպաշնի) կուլտուրաների ցողուններից կուլիսնեք են շինված, դրվում են վահաններ, խուրձեր, ցախի կույտեր, վորպեսզի նրանց միջոցով ձյունը պահվի հարկավոր տեղերում: Այստեղ կազմակերպված են առանձին բրիգադներ, վորոնք կատարում են ձյունը պահելու աշխատանքները: Այս կոլտնտե-

տությունները կիրառում են բոլոր մատչելի յեղանակները, վորպեսզի ձյունն ու խոնավությունը պահեն դաշտերում:

Ով ուզենա յետ մնալ Միլլերովոյի առաջավոր կոլտնտեսություններից, նա կլինի բերքի համար ձեռնարկված տրջավի պոչում: Յուրաքանչյուր կոլտնտեսական պիտք է պայքար մղի, վորպեսզի նրա կոլտնտեսությունն իր կամքին յենթարկի ձյան ջրերը: Յերկրկոլտնտեսությունը պահանջում է, վոր բոլոր կոլտնտեսություններն իրենց ձմեռային աշխատանքների պլանի մեջ անպայման մտցնեն ձյուն պահելը, վորպես հիմնական միջոցառում բերքի բարձրացման համար:

Կոլտնտեսությունը պարտավոր է ունենալ լավ կազմված և բոլոր կոլտնտեսականների կողմից կշռադատված «չլան» ձյունն ոգտագործելու համար: Այս աշխատանքները պետք է կատարեն հատուկ բրիգադները, ըստ պլան-նարչադների (վորոնք տրվում են վարչության կողմից) և անպայման գործավարձի հիմունքով:

Պետք է պատրաստի ունենալ անհրաժեշտ քանակությամբ նութեղեն և արտադրության միջոցներ, վորոնք հարկավոր են ձյունը պահելու համար—զանազան գործիքներ, ցախի, յեղեղի, ծղնուտի կսպոցներ և այլն:

Արտադրական խորհրդակցությունները պարտավոր են յուրաքանչյուր հնգորյակում քննել ձյունն ոգտագործելու աշխատանքների ընթացքն և արագությամբ վերացնել բոլոր պակասություններն ու բացերը:

Ամեն մի կոլտնտեսական և կոլտնտեսուհի պարտավոր է ցույց տալ բարձր ակտիվություն, վորպեսզի կոլտնտեսությունները ձյան ոգտագործման պլանը կատարեն լիովին:

Պահենք ձյունը, դաշտերից դուրս չթողնենք խոնարհությունը—բարձրացնենք բերքը

### ՅԵԹԵ ՅԵՂԱՆԱԿԸ ԹՈՒՅԼ ՏԱԼ, ՉՄԵՌՆ ԵՆ ՎԱՐԻՐ

Աշնանավարը վոչ միայն բերքը բարձրացնում է 20 տոկոսով, այլ և կրճատում է կոլտնտեսության աշխատանքը

գարնանացանի լտրված ժամանակ: Կոլտնտեսութունը վոր-  
քան շատ աշնանավար ունենա, այնքան հեշտ կլինի նրա  
համար ցանքը վերջացնել նորմալ ժամանակին: Սա նույն-  
պես մեծ նշանակություն ունի բերքատվության համար:  
Իսկ մեր յերկրամասը 1931 թվականին չի կատարել աշնա-  
նավարի պլանը:

Ահա թե ինչու այնտեղ, ուր յեղանակը թույլ է տալիս,  
պետք է գարնանացանի համար վարել նաև ձմեռը: Դրա հա-  
մար պետք է ոգտագործիլ բարենպաստ յեղանակի յուրա-  
քանչյուր ուրը և բոլոր ունեցած արտադրության միջոց-  
ները:

Հնարավոր է, վոր տեղ-տեղ կոլտնտեսության ղեկա-  
վարությունը փորձե ընթացք չտալ ձմեռային վարին:  
Կոլտնտեսական մասսաները պետք է բողջիկյան հակահարգած  
աան այդպիսի օպորտունիստական փորձերին: Կոլտնտեսա-  
կաններն իրենք պարտավոր են նախաձեռնություն հանդես  
գերել և ստիպել իրենց վարչություններին, վոր սրանք  
բողջիկորեն ղեկավարեն բերքի համար ձեռնարկված ար-  
շավը:

Պավլովսկի ռայոնում ղեկտնմբերին, ուժեղ սառնամա-  
սիքներից հետո, յերկար ժամանակով տաք յեղանակ հա-  
աստվեց: Կոլտնտեսականները ծոծրակներն եյին քորում և  
սսում:—

— Ամա յեղանակ է հաճ, այ քեղ աշնանավարի լտվ  
ժամանակ:

Կոլտնտեսության ղեկավարությունն աշխատում եր  
«չնկատել» վարի համար նպաստավոր յեղանակը, իսկ իրենք,  
կոլտնտեսականները նախաձեռնություն չհայտնաբերե-  
ցին: Այսպիսով իզուր անցան շատ տաք որեր, վորոնք կա-  
րող եյին ուժեղացնել ագրոտեխնիկական արշավի ղերքերը:  
Եթե պավլովցիները նրանց ոգտագործեյին վարի համար:

Տաք յեղանակներ կլինեն և հունվարին և փետրը-  
վարին, մանավանդ հարավային ռայոններում: Կոլտնտեսա-  
կաններն այդ տաք յեղանակները պետք է ոգտագործեն

վնչ այնպես, ինչպես ոգտագործեցին պավլովցիները ղեկ-  
տնմբեր ամսում:

Յեթե կոլտնտեսականն ենտուղիաստ է բերքի համար  
մղվող պայքարում, ապա նա կաշխատի իր կոլտնտեսու-  
թյան մեջ թույլ չտալ պավլովցիների սխալները և կգոր-  
ծադրե բոլոր ճիգերը, վորպեսզի ձմեռը վարելով, ավելաց-  
նի գարնանացանի համար յեղած վարը:

Յերկրկոլտնտմիությունը պահանջել է, վորպեսզի հա-  
րավային ռայոնների կոլտնտեսությունները պահպանեն  
դոյություն ունեցող այն խմբակները, վորոնք կազմակեր-  
պվել եյին աշնանավարի համար: Այս խմբակներն տմրողջ  
ձմեռը պետք է պատրաստ լինեն, վորպեսզի տաք յեղանակ  
սկսվեց թե չե, արագությամբ դուրս դան վար անելու:

Վորովհետև ձմեռվա որերն աշնան որերից կարճ են,  
ուստի պետք է սահմանվեն վարի այնպիսի նորմաներ, վոր  
կոլտնտեսականներն իսկապես կարողանան հարվածային  
աշխատանքով կատարել այդ նորմաները: Աշնանը սահման-  
ված նորմաները պետք է պակասեցվեն վոչ ավելի 25 տո-  
կոսից: Ձմեռվա վարի աշխատանքները պիտի կատարվեն  
[redacted] գործավարձի հիմունքով:

Վորքան ակտիվ լինի յուրաքանչյուր կոլտնտեսական,  
այնքան կոլտնտեսությունը հաջողությամբ կկատարե բեր-  
քատվության բարձրացման իր լտնդիրը: Իսկ կոլտնտեսա-  
կանի բարձր ակտիվությունը կոլտնտեսական արտադրու-  
թյան հիմքն է:

Ուտի—

Յեղիր ակտիվ, յեղիր վարի նախաձեռնող և ենաու-  
ղիաստ:

### ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԸ ՇԵՐՔՈՎ ՊԻՏԻ ՑԱՆԵԼ

Փորձնական աօխտսանճով գրավեցեմ ագրոտեխնիկայի  
բարձրուցեցերը

Մի քանի «գաղտնիքներ», վորոնք ծածկում են ղեպի  
բարձր բերք տանող ճանապարհները, շատ հասարակ կերպով

կրացվին, յեթե լավ մտածել նրանց վրա: Այդպիսի «գաղ-տնիքներէց» մեկն և ցանքափոխությունը կամ ցանքաշը-ջանը, այսինքին վորոշ քանակութեամբ տարիների ընթաց-քում կուտուրանների ճիշտ հերթափոխությունը տվաւ հողամասի վրա:

Մեր կոլտնտեսությունները հազարավոր ցենտներնե-րով բերք են կորցնում հենց միայն այն պատճառով, վոր չեն կարող, կամ չեն ուզում ցորենի կամ մի այլ կուլտու-րայի համար ընտրել ամենաողտակար նախորդը: Բայց չէ վոր ամեն մի կուլտուրայի համար ողտակար և նրանից առաջ ցանված այն բույսը, վորը քիչ սննդարար հյութեր և ծծում հողից և վորը քիչ և աղտեղում հողամասը:

Ուրեմն, բերքի համար մղվող պայքարում կուլտուրա-ների լավ հերթափոխություն կատարելու կարողութեանը հակայական նշանակութեան ունի: Ահա թե ինչու կանոնա-վոր ցանքափոխությունը պետք և լինի մի կարևորագույն ազրոտեխնիկական միջոցառում կոլտնտեսութեան արտա-դրական պլանում:

Այն կոլտնտեսականների համար, վորոնք բուշելիկան ռզլիդ յեղրակացութեան են հանել ընկ. Յակովլեվի ճառից, փորձնական կայանների տվյալները, նրանց գիտական նվաճումները պետք և ուղեցույց լինեն կոլտնտեսական յեր-րորդ զարնան ընթացքում: Ահա նախկին յերկրային փոր-ձնական կայանի տվյալներն աշնանացան ցորենի, ինչպես նաև զարնանացան ցորենի բերքատուութեան մասին.—

Վաղ ցելի վրա ցանված աշնանացան ցորենը մի հեկ-տարից տալիս և 15,5 ցենտներ բերք, իսկ այն ցորենը, վորը ցանվում և խոզանում (չհերկած արտում), մի հեկտարից տալիս և միայն 7 ցենտներ բերք:

Բոստանում (բախչա) ցանված զարնանացան ցորենը մի հեկտարից տալիս և 10 ցենտներ, յեղիպտացորենի ար-տում ցանվածը—9 ցենտներ, իսկ խոզանում ցանվածը— միայն 5 ցենտներ մի հեկտարից, այսինքն յերկու անգամ պակաս:

Ահա քեզ այն «գաղտնիքներից» մեկը, վորը բաց անելով, փորձնական կայանը կրկնապատկեց ցորենի բեր-քը: Իսկ չէ վոր մեղանում կոլտնտեսութեանների հակայա-կան մեծամասնութեան ցորենը ցանում և խոզանի վրա, կորցնելով բերքի կեսը, ուրեմն այդպիսով յերկու անգամ կրճատում և կոլտնտեսականի յեկամուտը:

Գուրս և գալիս, վոր հենց միայն կանոնավոր ցանքա-փոխութեամբ կարելի յե յերկու հասկ բուսցնել այնտեղ, վորտեղ մի հասկ և բուսնում:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի պարտքն և ստիպել իր կոլտնտեսութեան, վոր վերջինս պետական պլանային տաշարողութեանների հիմունքով սահմանե կանոնավոր ցան-քափոխութեան, զարնանացանի ժամանակ ազրոտմիական յեղանակով դասավորե զանազան կուլտուրաները:

Ընդայնված արտադրական խորհրդակցութեաններում վարչութեան մեջ, համակոլտնտեսական ժողովներում պետք և լավ քննել ու կշռազատել ցանքափոխութեան հարցը, ողարգարանել այն կոլեկտիվորեն, գյուղատնտեսի և ազրո-տեխնիկի ղեկավար մասնակցութեամբ: Հարկավոր և, վոր ամեն մի բրիգադիր, ողակապետ, ամեն մի շարքային կոլ-տնտեսական իր մտքից չհանի կուլտուրանների կանոնավոր հերթափոխութեանը:

Կոլտնտեսական յերրորդ ցանքի յուրաքանչյուր մասնա կից պետք և ղիտենա կոլտնտեսութեան ընդունած ցանքափո-խութեանը, պայքար մղե, վորպեսզի ընդունված ցանքա-փոխութեանն ապահովե գյուղատնտեսական ստուգիչ առա-ջադրութեանների կատարումը: Կոլտնտեսականը պետք և մեծ հողատարութեան հայտնարբեր նրա համար, վոր ցան-քափոխութեան միջոցով բերքը բարձրացվի:

Սակայն բավական չե, վոր ազրոտեխնիկայի բարձունք ները նվաճող կոլտնտեսութեանները միայն ողտազործին փորձնական կայանների և այլ գիտական հիմնարկների փորձը: Ինքն ըստ ինքեան հասկանալի յե, վոր կոլտնտե-սութեանները պետք և տիրապետեն ազրոտեխնիկական

գիտութեան բոլոր նվաճումներին: Սա նրանց ամենակարգ-  
վոր և կենտրոնական խնդիրն է:

Բացի դրանից, կոլտնտեսութեաններն իրենք ևս պի-  
տի փորձեր կատարեն դաշտերում: Նրանք պետք է փորձեն  
կուլտուրաների դանազան տեսակները, ուսումնասիրեն բույ-  
սերի բոլոր պահանջները, վորպեսզի կարողանան  
բավարարել նրանց: Մի խոսքով, պետք է լրացնել  
գիտական հիմնարկների աշխատանքը, փորձեր կատարելով  
սեփական դաշտերում:

Անհրաժեշտ է կոլտնտեսութեաններում լայն չափով  
զարգացնել մասսայական փորձնականութեանը: Կոլտնտե-  
սականները պետք է աշխատեն, վոր զարնանն իրենց մոտ,  
փորձնական կայանների ղեկավարութեամբ, ցանվեն փորձ-  
նական հողամասեր, ուսումնասիրվեն սերմացուների առան-  
ձին տեսակները (վորոնք հարմար են տեղական պայման-  
ներին), նոր կուլտուրաներն և փորձնական կայաններէ  
զանազան նվաճումները, ինչպես և ուսումնասիրվեն առա-  
ջավոր կոլտնտեսութեաններէ ու խորհատնտեսութեաններէ  
նվաճումները:

Այդ նպատակով պետք է կապ հաստատել ամենամո-  
տիկ փորձնական կայանի և գյուղատնտեսական դպրոցների  
հետ: Այս գործին պետք է ներգրավել գյուղատնտեսներին,  
գյուղերի ա դպրոցներին և կոլտնտեսական արտադրութեանն  
ու ագրոտեխնիկան ուսումնասիրող յերեկոյան դպրոց-  
ներին:

Մի քանի կոլտնտեսութեաններ արդեն իրենց դաշտե-  
րում փորձնական աշխատանքներ են կատարում: Այդպիսի  
որինակ կարող է ծառայել Ստարոմինսկու շէնիյան ուղի  
արտելը: Ստարոմինցիների փորձնական դաշտն ողնեց նը-  
րանց՝ ընտրելու սերմացուների ամենալավ տեսակները, սահ-  
մանել ամենաոգտակար ցանքափոխութեան, վորոշել առան-  
ձին կուլտուրաների համար վարել հարկավոր խորութեանը:  
Ստարոմինցիների փորձնական դաշտում անցյալ տարի աշ-  
նանացան ցորենի միջին բերքը հավասար էր 13,2 ցենտ-

ների, իսկ գարնանացան ցորենի բերքը—9,39 ցենտների  
(մի հեկտարից): Սակայն փորձեր կատարող կոլտնտեսա-  
կանները, իրենց կատարած հետազոտութեան շնորհիվ, վեր-  
ջին ցորենի այնպիսի տեսակ և մշակման այնպիսի յեղա-  
ձակներ կիրառեցին, վոր ցորենը մեկ հեկտարից տվեց  
19,45 ցենտներ բերք:

Յեւ այսպես, Ստարոմինսկու կոլտնտեսականները  
կամ են հաղթանակն ագրոտեխնիկական արշավի ընթաց-  
քում: Նույնպես պետք է հաղթանակի ձգտեն յերկրամասի  
բոլոր մնացած կոլտնտեսականները:

Այսպես ուրեմն—

Ձյունն ոգտագործելով, ձմեռը վար անելով, կանոնա-  
վոր ցանքափոխութեամբ, փորձնական աշխատանքի և մաս-  
սայական ագրոտեխնիկական ուսուցման ծավալումով—

Դաշտային աշխատանքների ժամանակ ագրոպլան—  
նարյաղի վորակային նորմաները բարեխղճորեն կատարե-  
լով—

Դրովել ագրոտեխնիկայի բարձունքները, կրկնապատ-  
կել կոլտնտեսական դաշտերի բերքը:

### ԱՎԵԼԻ ՄԵԾ ՇՈԳՍԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ

Ամուր, լավ վերանորոգված մեքենան կոլտնտեսու-  
թեան լավագույն ողնականն է: Միանգամայն կանոնավոր  
դուրբանը, տափանը, ցանիչը չի դանդաղեցնի աշխատանքը,  
չի իջեցնի աշխատանքի վորակը: Սրանք կողնեն կատարե-  
լու մշակույթի հարվածային նորմաները,—թե քանակի և  
թե վորակի տեսակետից: Իսկ չե՞ վոր այժմ, յերբ բրիգադը  
գաշտ դուրս կգա ագրոպլան նարյաղով, մշակույթի նոր-  
ման առանց ճշգրիտ վորակային ցուցանիշների չի լինի  
այն, ինչ վոր պետք է լինի,—այսինքն չի լինի գործավար-  
ձի հիմք:

Իսկ բուխ խոփ ունեցող գուլթանը, շտապ ու լավ կե-  
րպ վերանորոգված ցանիչը պիտի պակասեցնեն արտա-

գրողականութունն և տան ցածր վորակի վար ա. ցանք, շնայած կոլտնտեսականի կատարյալ բարեխղճության և նույնիսկ եւտուղիազմին: Այդ նշանակում և, վոր գութանավորը, ցանվորը, տափանողը չպիտի կատարեն մշակույթի նորմաները, ազրոտեխնիկական միջոցառումները կկորցնեն իրենց ույժը: Կոլտնտեսությունն ել կարող և ձեռքից բաց թողնել ցանքի նորմալ ժամկետերը, վորով կպահասի բերքատվությունը:

Ահա թե ինչու ինվենտարի իր ժամանակին և բարձր վորակի վերանորոգությունը կոլտնտեսական յերրորդ գաբնանը նախապատրաստվելու ամենակարևոր մոմենտներէց մեկն և:

Կոլտնտեսականի պարտքն է՝ մեծ հողատարություն հայտնաբերել ինվենտարի վերանորոգման համար: Հարկավոր և, վորպեսզի վերանորոգման համար պատասխանատվություն զգան վոչ միայն կոլտնտեսությունների ղեկավարները, այլ և ամեն մի առանձին կոլտնտեսական, ամբողջ կոլտնտեսությունը:

Յեթե կոլտնտեսության ինվենտարը չի ստուգված, չի վորոշված, թե ինչ չափով են մտնել առանձին մեքենաներն ու գործիքները (շտապ վերանորոգության համար), ապա հարկավոր և իսկույն և յեթ վերացնել այդ թերությունը: Հարկավոր և մանրակրկիտ կերպով դիտել ամբողջ ինվենտարը և այն ամենը, ինչ վոր սարքված չէ, շտապ կերպով հանձնել արհեստանոցին, վերանորոգության համար: Նայած թե կոլտնտեսությունը վերանորոգման ինչ պլան ունի, պետք և բոլոր արհեստանոցները և մանր դարբնոցները բեռնավորել այնպես, վորպեսզի այդ աշխատանքն անպայման կատարվի իր ժամանակին:

Յեթե կոլտնտեսության մեջ սեփական արհեստանոցներ չկան, պետք և ոգնություն խնդրել հարևան խորհատնտեսությունից, մեքենա-տրակտորային կայանից, արդյունաբերական կոոպերացիայից, պրոֆտեխնիկական դպրոցից և այլն:

Անցյալում լինում եր այնպես, վոր շատ կոլտնտեսություններ արդին դաշտ դուրս գալու նախորդակին չիյին աւնենում ըավականաչափ քանակությամբ սարքի բերված մեքենաներ: Վերանորոգությունը խանգարվում եր շնորհիվ յերկաթի և վերանորոգման համար ուրիշ անհրաժեշտ նյութեզինի պակասության: Միևնույն ժամանակ թե կոլտնտեսության բակում և թե առանձին կոլտնտեսականներ տնտեսություններում թափթփված էյին հին մեքենաների շատ մասեր, վորոնց կարելի յեր հաջողությամբ ոգտագործել ինվենտարի վերանորոգության համար: Վորպեսզի կոլտնտեսականն ստիպված չլինի չսարքված գութանով վարել, նա չպիտի թույլ տա, վոր իր կոլտնտեսությունը հասնի այդպիսի ամոթալի դրության:

Գիտակից կոլտնտեսականի (իսկ գիտ սկից պարտավոր և լինել կոլտնտեսության ամեն մի անդամը) պարտքն և լինել ակտիվիտ կոլտնտեսության բոլոր ներքին միջոցները վերանորոգման համար մորթիլդացիայի յենթարկելու ասպարիզում: Պետք և հավաքել և արհեստանոցներին հանձնել մեքենաների բոլոր հին մասերը, յերկաթի ջարդվածքը: Արհեստանոցում վարպետները կշուկեն ինչ վոր պետք և կոգտագործին ուր վոր պետք և:

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՇՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Վերանորոգման կամպանիայի հաջողությունը հիմնականում վճռում են դարբիններն և այլ վարպետները: Յեթե վարպետը հարվածայնորեն աշխատի, արհեստանոցը կկատարի իր որական առաջադրությունները, իսկ կոլտնտեսությունը զարնանր կդիմավորի սարքված ինվենտարով: Այս պատճառով կոլտնտեսականները պետք և իրենց վարպետներին սոցիալիստական հաշիվ ներկայացնեն: Ահա թե ինչ պահանջներ պիտի առաջադրվեն վերանորոգման վարպետներին:—

Յուրաքանչյուր կոլտնտեսական, վորն աշխատում է արհեստանոցում, պարտավոր է հոգս քաշել, վորպեսզի իբր արհեստանոցն ունենա վերանորոգման լավ մշակված, մտածված պլան-նարքայո: Պլան-նարքադում պետք է պարզ առաջադրություններ արվին ամեն որվա համար, մինչև վերանորոգման վերջը: Պետք է մշակույթի հարվածային նորմաների համար պայքարել վոչ թե խոսքերով, այլ գործով, այսինքն կատարել ու գերակատարել այդ նորմաները:

Արհեստանոցներում գործավարձը պիտի անցկացվի հաստատուն կերպով ու վճռականորեն, առանց ամենաչնչին խեղաթյուրումների, առանց «հավասարեցման» թեկուզ մի ամենաչնչին նշանի:

Անցյալ դարնանը յերկրամասի մի քանի կոլտնտեսություններում բոլոր աշխատանքները պիտի կատարվիին գործավարձով, իսկ արհեստանոցներում աշխատող կոլտնտեսականներն իրենց կաշու վրա զգում էին կուլակային «հավասարեցման» արդյունքները: Այսպես եր Մոզգոլի ոսյոնի Գալյուզասկի կոլտնտեսության մեջ, Այստեղի արհեստանոցներում չկային մշակույթի նորմաներ, դարբինների, ատաղձագործների և այլ վարպետների աշխատանքը վոչ վոք հաշվի չեր առնում, վոչ վոք պատասխանատու չեր նրանց համար:

— Մենք չգիտենք ինչպես ենք աշխատում: Մեզնում վոչ մի կարգ չկա: Չգիտենք, թե մեզանից ամեն մեկն ինչ պիտի անի այսօր, վաղը չե մյուս օրը և քանի՞ աշխատանքային օր կստանանք:

Այսպիսի դրությամբ արհեստանոցն իհարկե չի կարող իրագործել իր վրա զրված խնդիրը: Այդ խնդիրը հաջողությամբ իրագործելու համար գործավարձը պետք է արհեստանոցում ևս բռնի նույնպիսի պատվավոր տեղ, ինչպես և դաշտային աշխատանքներում:

Վերանորոգման բրիգադան իր հարվածային աշխատանքի ընթացքում պետք է հենվի անհատական գործա-

վարձի վրա: Պետք է ճիշտ առաջադրություն տալ արհեստանոցին, բրիգադային և յուրաքանչյուր առանձին վարպետին:

Մինչև վերջ պետք է ջախջախել դիմագրկությունը վերանորոգման մեջ: Վարպետը պետք է գիտենա իրեն հանձնարարած աշխատանքը և ամբողջովին պատասխանատու լինի նրա համար: Պետք է ճշգրիտ բաշխել պարտականությունները, վորոշ ցանիչը կամ նրա մի մասը պետք է վերանորոգեն վորոշ վարպետներ, նշանակելով իրենց անունը, հայրանունն ու ազգանունը:

Յեթե վերանորոգված մեքենան արագությամբ դուրս գա շարքերից (անպետքանա), ուրեմն վերանորոգման արհեստանոցում դիմագրկություն է յեղել, բացակայել է գործավարձը:

Վերանորոգման վորակը պետք է բարձր լինի: Իսկ այդ կարելի չե ձեռք բերել միայն այն դեպքում, յերբ յուրաքանչյուր վարպետ ճշտությամբ կիմանա իր պարտականությունը և պատասխանատու կլինի վորոշ գուծանի, տափանի, ցանիչի և այլնի համար:

Անբարեխիղճ աշխատողներին պետք է պատժել: Պետք է 25 տոկոսով իջեցնել այն վարպետի աշխատանքային օրերը, վորը վատ է վերանորոգել մեքենան: Սակայն այդ քիչ է: Պետք է կոլտնտեսականին ստիպել, վոր կրկնի վերանորոգումը, բայց արդեն առանց նրա վրա աշխատանքային օր զրելու: Վատ աշխատողների վերաբերմամբ այս միջոցները պետք է անպայման կիրառել, քանի վոր այդպես է հրահանգել Յերկրկոլտնտմությունը:

Այս են պահանջում ամբողջ կոլտնտեսության շահերը: Յուրաքանչյուր վարպետի պարտականությունն է պայքարել վերանորոգումն իր ժամանակին և լավ վորակով կատարելու համար: Գործավարձի, սոցիալիստական մրցության և հարվածայնության միջոցով կատարեցիք ձեզ ներկայացրած սոցիալիստական հաշիվը:

Կոլտնտեսական յերրորդ գարնան նախապատրաստութեան ասպարիզում չպիտի լինեն յետամնացներ: Իսկ յեթն լինեն յետ մնացող կոլտնտեսութեաններ, վորոնք մի վորեն պատճառով կձգձգեն վերանորոգումը, պետք է ոգնել, բուքսիրի վերցնել նրանց: Սա նույնպէս մտնում է վերանորոգման վարպետներին ներկայացվող սոցիալիստական հաշվի մեջ: Պետք է յետամնաց կոլտնտեսութեաններն ուղարկել վերանորոգման բրիգադներ, ընդունել նրանցից ինվենտարն, իրենց արհեստանոցներում վերանորոգելու համար:

Կոլտնտեսականը ուշի-ուշով պիտի հետևի, վոր թե վերանորոգված է թե չվերանորոգված ինվենտարը պահպանվի հարմար շենքերում: Անխնայորեն պետք է պայքարել բոլոր նրանց դեմ, ովքեր անտնտեսավարութեան են ցույց տալիս: Մեքենային պիտի վերաբերվել հոգատարութեամբ և ուշադրութեամբ, վորպեսզի նա կարողանա աշխատել վորոշված ժամկետներում:

Կոլտնտեսական յերրորդ գարնան պատրաստութեան ստուգատեսին դուրս պետք է դալ բավականաչափ քանակութեամբ միանգամայն սարքովի ինվենտարով: Կոլտնտեսական, մի թույլ փուլ, վոր քո կոլտնտեսութեանը խայտառակվի այդ ստուգատեսի ժամանակ: Հիշել հետևյալ ժամկետները.—

Յերկրամասի հարավային աայունները, հաշվելով նաև Աշխգեյան, պետք է ամբողջ ինվենտարը լիովին կարգի բերած լինեն մինչև փետրվարի 20-ը: Յերկրամասի բոլոր մասցած աայուններն ու մարզերը վերանորոգումն ավարտում են մինչև մարտի 1-ը:

Դեռ մինչև վերանորոգումը բոլոր մեքենաները պետք է ամրացնել բրիգադներին և նրանցից ամեն մեկն անպաման համարակալել: Բացի դրանից, յուրաքանչյուր մեքենա պետք է ամրացվի վորոշ կոլտնտեսականի, վորը պետք է աշխատի այդ մեքենայի վրա և վորը պարտավոր է հետևել վերանորոգման արագութեան և վորակին: Ինվենտարի

ոգտագործման մեջ դիմադրելութունը մինչև վերջ պիտի շախշախել: Կոլտնտեսականը պարտավոր է գիտենալ գութանի, տափանի կամ ցանիչի №-ը, վորոնցով նա պիտի աշխատի:

Անհրաժեշտ է, վոր կոլտնտեսականները ծանոթանան իրենց ամրացված մեքենաների հետ, ստուգեն մեքենայի մասերի միացումը և պատրաստութեանը, ուսումնասիրեն նրանց հատկութեանները, հետևեն, վոր նրանք պահպանվեն միանգամայն պատրաստի դրութեամբ:

Ցանքային դրոհին դուրս դալուց առաջ չպետք է մոռանալ նաև մի կարևորագույն հանգամանք.— դա ինվենտարի վերանորոգումն է դաշտում: Մինչև մարտի 10-ը բոլոր կոլտնտեսութեաններն իրենց պիտի ապահովեն արհեստանոցներով, բավականաչափ քանակութեամբ վերանորոգման նյութեղանով, ածուխով և վարպետներով: Յուրաքանչյուր մանր շարքվածք պետք է սարքել տնդում, դրա համար մեքենան չուղարկել դուրս: Անպալ ցանքային կամպանիաներում շատ կոլտնտեսութեաններ անագին բանվորական ժամեր հյին կորցնում, դաշտերից ուղարկելով մեքենաները մանր վերանորոգման համար:

Մեքենան պատվավոր տեղ ունի ցանքում: Ուրեմն հարկավոր է նրան լավ նորոգել և ցանքային աշխատանքների ժամանակ ավելի մեծ հոգ տանել նրա մասին:

### ՄԱՔՈՒՐ ՍԵՐՄԱՅՈՒ ՅԱՆԵՆԲ

Մեր դաշտերում դեռ ևս շատ մուխոտեր կան: Նրբանք ծծում են հողի սննդաբար հյութերը, այն խոնավութեանը, վորի կարիքն են զգում նույն դաշտում ցանված կուլտուրաները: Գյուղատնտեսութեան հայտնի մասնագետ, պրոֆեսոր Ա. Նասատովսկու տվյալների համաձայն, մեր դաշտերում բուսանող մուխոտերի յուրաքանչյուր ցենտները հողից կլանում է 400-500 ցենտներ ջուր:

Վ՛րտեղից ե առաջ գալիս այդ թշնամին: Ո՞վ ե նը-  
րան թողնում մեր կոլտնտեսական դաշտերը: Բանից դուրս  
ե գալիս—մենք ինքներս: Մենք ինքներս, մեր ձեռներով,  
հողի մեջ ենք գցում զանազան մոլախոտերի սերմեր: Ցորե-  
նի, հաճարի, գարու, վարսակի և այլ կուլտուրաների սեր-  
մերի տասնյակ հազար վերլուծությունները (հետազոտու-  
թյունները), վորոնք կատարվել են մեր փորձնական կու-  
լանների լաբորատորիաներում, ցույց են տվել, վոր հիշյալ  
կուլտուրաները պարունակում են մեծ քանակությամբ մո-  
լախոտերի սերմեր: Բանից դուրս ե գալիս, վոր մենք նը-  
րանց համար ել ենք աշնանավար պատրաստել, նրանց հա-  
մար չարչարվել ենք, վոր ավելի լավ բուսնեն:

Այդպես չպիտի լինի: Մինչև զարուն պետք ե ժաքբել  
ամբողջ սերմացուն: Հարկավոր ե վոչ միայն մաքրել  
հատիկները, այլ և տեսակավորել և ախտահանել: Համա-  
ձայն կոլտնտնության և ձմեռային աշխատանքների ծրա-  
գրի, յերկրամասի բոլոր կոլտնտեսություններում սերմա-  
ցունների զտումն ու տեսակավորումը պետք ե վերջանա վոչ  
ուշ, քան մինչև հունվարի 1-ը:

Անհատական չքավորներն ու միջակները, վորոնք  
կոլտնտեսություն են մտել, պարտավոր են արտելի սերմ-  
ֆոնդի մեջ ստցնել իրենց սերմացուն:

Այստեղ, վորտեղ սերմացունները պահվում են բրի-  
զադներում, մաքրելու համար պետք ե ստեղծել հատուկ  
խմբակներ (յուրաքանչյուր բրիզադայի ներսում): Այսպիսի  
գեպքերում գործը ղեկավարում ե բրիզադիրը:

Իսկ յեթե սերմացունները պահվում են համակոլտնտե-  
սական շտեմարաններում, ապա նրանց ժաքբելու համար  
վարչությունն ստեղծում ե ժամանակավոր բրիզադա, վորն  
իր հերթին բաժանվում ե առանձին խմբակների: Խմբակնե-  
րը կարող են տարբեր լինել: Այդ կախված ե նրանից, թե  
կոլտնտեսութեան մեջ ինչպես են զասավորված գտիչ կու-  
լանները: Յեթե սերմագտումը կատարվում ե մի տեղում,  
ապա բրիզադան բաժանվում ե յերեք խմբակների: Առաջին

խմբակը միացնում ե այն կոլտնտեսականներին, վորոնք  
աշխատում են հողմահարող-տեսակավորող մեքենաների վրա:  
Յերկրորդ խումբն աշխատում ե Ֆուխտեշների և յերրորդը  
—տրիչերների վրա: Իսկ այն գեպքերում, յերբ կոլտնտե-  
սության մեջ սերմագտումը կատարվում ե մի քանի տեղե-  
րում, ապա յուրաքանչյուր սերմագտիչ կայանի համար  
նշանակվում ե խառն խմբակ, վորի պարտականությունն ե  
թե տեսակավորել և թե գտել հացահատիկները:

Սերմագտիչ բրիզադան պետք ե ստանա բանվորական  
ուլան-նարյադ: Այս պլան-նարյադում պետք ե մատնա-  
նշել, թե բրիզադան ի՞նչ և ինչքան սերմացու պիտի գտն,  
զրա համար վորքան մեքենաներ կան, վորքան ժամանա-  
կամիջոցում բրիզադան պետք ե կատարե այդ աշխատան-  
քը և զրա համար քանի՞ մարդ ե հարկավոր:

Գանի վոր սերմագտումը, ինչպես նաև մյուս բոլոր  
արտելային աշխատանքները, կատարվում ե գործավարձի  
հիմունքով, զրա համար սերմագտիչ բրիզադայի համար  
կազմված պլան-նարյադում պետք ե ճշտությամբ մատնա-  
նշվեն մշակույթի նորմաներն և նրանց զնահատումն աշ-  
խատանքային որերով: Յուրաքանչյուր կոլտնտեսականի  
պարտականությունն ե կատարել ու ղերակատարել այդ  
նորմաները: Սերմագտման պլան-նարյադը պետք ե լայնու-  
թեան քննել համակոլտնտեսական արտադրական խորհրդակ-  
ցությանը:

Մի ուրիշ շատ կարևոր հարց—դա սերմացունների ախ-  
տահանումն ե: Կազմելով սերմացունների ախտահանման պլա-  
նը, կոլտնտեսությունները պետք ե հաշվի առնեն, թե վոր-  
քան հացահատիկ պետք ե յենթարկել չոր և վորքան—թաց  
ախտահանության: Այստեղից յենելով, պետք ե պարզել  
ախտահանիչ միջոցների, մեքենաների ու մարդկանց առ-  
բաժեշտ քանակությունը:

Մեքենաների և ախտահանիչ նյութերի մասին պետք  
ե վաղորոք հոգալ: Այդ բոլորը պետք ե պատրաստ լինի

մինչև փետրվարի 1-ը: Այն կողմնտեսությունները, վորոնք իրենց մոտ ունեն չոր ախտահանիչ նյութեր, ախտահանումը պարտավոր են սկսել սերմագտումից անմիջապես հետո:

Առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել տեսակավոր սերմերին: Տեսակավոր ցանքերի պլանները պետք է լրովին կատարվեն: Յեթե կալանտեսության տեսակավոր սերմերը պակասում են, նա պարտավոր է իր հասարակ սերմացուն փոխել տեսակավորով: Մովորական սերմացուները տեսակավորով փոխանակելը պետք է վերջանա հարավային ուսյուններում վոչ ուշ, քան մինչև մարտի 1-ը: Յերկրամասի միջին գոտու ուսյուններում այդ փոխանակությունը պիտի վերջանա մինչև մարտի 10-ը և հյուսիսային գոտու ուսյուններում—մինչև մարտի 20-ը:

### ԿՈՎԵԼ ԼՄԿԱՆԻ ՆԻՇԱՐՈՒՅՅԱՆ ԴԵՄ

Կողմնտեսության ձին վորքան ուժեղ, գիմացկուն, աշխատունակ լինի, այնքան բարձր կլինեն ցանքի տեմպերն, այնքան լավ վորակ կունենա աշխատանքը: Իսկ ձիերի նիհարությունը (լիարությունը), նրանց թուլությունը հենց սկզբից կգանդագեցնի աշխատանքը, կիջեցնի կողմնտեսականների աշխատանքային վողեորությունը:

Անցյալ դարնանը մի քանի կողմնտեսություններ քարշ էյին գալիս ցանքային գրոհի պոչից, վորովհետև նրանց ունեցած ձիերը կմախքներ էյին միայն, վորոնց վրա կաշին եր հագրած: Այսպիսի «լծկանը» դաշտային աշխատանքների հենց ամենայնուհեմ ժամանակ իսկույն դուրս եր գալիս շարքերից:

Այդպիսի կողմնտեսություններում աճում եր ձեղքվածքների սպանուլիքը և միևնույն ժամանակ նրանց բրիգադաները չէյին կատարում իրենց որական ռազմադրությունները, վորովհետև ձիերի 20, 30 և նույնիսկ 40 տուկուսը թույլ եր և սակավ աշխատունակ:

Ուրեմն լծկանի նախապատրաստությունը ցանքի համար՝ կողմնտեսականների բոլոր խնդիրներից ամենամար-

տականն է: Հոգս քաշել ձիու մասին, այդ նշանակում է հոգս քաշել կողմնտեսական յերրորդ դարնանացանի հաջողության մասին: Ով դաշտերը գրոհելու համար դուրս կգա լիար, քոսոտ ձիով, նա կխայտառակվի հենց առաջին քայլից, նա հանցագործություն կատարած կլինի թե իր և թե պետության առաջ:

Ամենամանրակրկիտ խնամք տանել ձիուն ու յեղան: Չմեղվա ընթացքում վերականգնել և ամրապնդել լծկանների ույժերը, իսկ դրա համար—

Վերացնել զիմազրկությունը ախոռներում և յեղանոցներում: Ամեն միջոց ձեռք առնել խոտը—կերը ամսեսերու և լծկանին կերակրելու:

Ամրապնդել դործավարձը լծկան անասունների խնամքի գործում:

Իսկ ձիուն խնամելու մեջ զիմազրկությունը դժբախտաբար վերացված չէ: Կողմնտեսություններում դեռ ևս կան այնպիսի դեպքեր, յերբ 10 ձիազան խնամում են, հարյուրավոր ձիերի, այն եր այնպես են «խնամում», վոր յեղած խայտառակությունների մեղավորներին վոչ մի կերպ չես դտնի:

Համկոմկուսի (ք) Յերկրկոմի, Յերկրգործկոմի ու Յերկրկորտնամիության վորոշման համաձայն\*), անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները.—

«Հունվար ամսի ընթացքում կողմնտեսականներին ամբացնել այն ձիերին, վորոնցով նրանք պիտի աշխատեն 1932 թվականի ընթացքում:

Անհրաժեշտ քանակությամբ կեր հատկացնել դ. տ. աշխատանքների ամբողջ սեզոնի համար, ստեղծելով կերի հատուկ անձեռնամխելի ֆոնդ՝ դարնանային աշխատանքների համար:

Կողմնտեսության վարչության կազմից ընտրել մի անձնավորություն, վորը հատկապես պատասխանատու լի-

\*Մուրա, 14-1—32 Թ.

նի լծկան ույժի դրության և կերի ֆոնդերն ոգտագործելու համար»:

Անտնտեսավարի, անփուլթ վերարերմունքը դեպի լծկանը— դեպի կոլտնտեսական արտադրութեան հիմքը— պետք է վճռականորեն և անհապաղ խեղդել իր բնույթը:

Վոչ մի ձի և յեղ չպետք է մնա բաց յերկնքի տակ: Ամբողջ լծկանը— դեպի տաքացրած շենքերը: Պահել նրան մաքուր և նրանց համար հաճելի: Կեր տալիս խստութեամբ պահպանել նորմաւերը: Ձիերին տրվող ջուրը պետք է լեւնի մաքուր, հատուկ տաշտակներում: Ախոռն ամեն ոք մաքուրել աղբից, մաքրել ողբ, ավել և փոխել տակի փովածքը: Թոտը— կիրը դեղեր դարսել, ծածկել, խանավութեանից պահպանել, չփթելու համար:

Լավ կահավորված շենքերում պետք է առաջին հերթին տեղավորել թույլ և հիվանդ կենդանիներին: Վարակիչ հիվանդութեաններ ունեցողներին պետք է չեղոքացնել: Այդ կենդանիների համար պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, վորպեսզի նրանք արագութեամբ առողջանան և կազդուրվեն:

Վերաքննիչ հանձնաժողովները և լծկանի համար պատասխանատու վարչութեան անդամները պարտավոր են հաճախակի ստուգել ախոռները, այդ անել մինչև անգամ գիշերը: Յուրաքանչյուր կոլտնտեսականի պարտքն է հետևել, վորպեսզի այդ բոլոր պահանջներն իսկապես կատարվեն:

Լծկան անասունների խնամքի ասպարիզում սոցիալ-խտական մ. ցումն և հարվածայնութեանը պետք է ծավալվեն վորքան կարելի յի լայն չափով:

Կոլտնտեսութեան բոլոր ախոռները պետք է հավառարվեն որինակելի ախոռներին: Սա արտադրական խորհրդակցութեան և յուրաքանչյուր անհատ կոլտնտեսականի պարտականութեանն է:

Պետք է հենց հիմնկվանից հոգս քաշել, վոր դաշտային աշխատանքներում ձին և յեղը լավ պայմաններում լի-

նեն: Ցանքի ամբողջ ժամանակվա համար անհրաժեշտ է հատկացնել թե կոշտ և թե խտացված կեր: Աշխատանքի ժամանակ ձիերի ու յեղների վատ կերակրումն այն հետեւյալանքը կունենա, վոր նրանք ուժասպառ կլինեն և կդանդաղեցնեն զարնանային աշխատանքները:

Բրիգադներին լծկանը պիտի ամբացնել իր ժամանակին, վորպեսզի դաշտ դուրս գալուց առաջ չվիժեցնել այդ պատասխանատու աշխատանքը: Մեծ մանրակրկիտութեամբ պիտի ստուգել լծկան դույզները, քանի վոր սրանից ևս շատ քան է կախված: Ամեն մի գույզի լծկանները պետք է հնարավորին չափ լինեն հավասար ույժի, միատեսակ հասակի, ունենան միատեսակ աշխատունակութեան: Այս մասին պետք է հոգս քաշի թե բրիգադիւրը և թե մանավանդ կոլտնտեսականները, վորոնք պիտի աշխատեն ձիերի ու յեղների հետ:

Ցանքի նորմալ ժամկետից չչեղվելու և պլանները հաջողութեամբ կատարելու համար, կոլտնտեսութեանները պետք է դաշտերում կազմակերպեն ամբողջ ու զիշերվա աշխատանք: Մանավանդ մեծ կլինի գիշերային աշխատանքների անհրաժեշտութեանը— յեթե ձյունն ու չհալի և գարնան գալը ձգձգվի:

Յեթե կոլտնտեսութեանն ապահովի լծկանի անհրաժեշտ խնամքը, կազմակերպի լծկանի ճիշտ ոգտագործումը, ապա նա կարող կլինի հաջողութեամբ կատարել ու զիշերվա աշխատանքը, հետևապես հաջողութեամբ կհաղթահարի դժվարութեանները: Ահա թե ինչու կոլտնտեսականները ձմեռը պետք է մտածեն այն մասին, թե ինչպես անել, վոր ճիշտ դասավորել լծկան ույժն և ապահովել նրա լավ խնամքը, ու ու զիշերվա աշխատանքի ժամանակ, Պետք է վաղորդ կազմել այդ աշխատանքի պլանը և այս պլանում ճշտութեամբ հաշվի առնել բոլոր «մանր բաները», վորոնցից կախված պիտի լինի ձիերի ու յեղների աշխատունակութեանը:

Վոր որ ու գիշերվա կազմակերպված աշխատանքը բարձրացնում է տեմպերը, առանց քայքայելու լծկանի ուշժերը,— դա ապացուցված է կոլտնտեսական յերկրորդ դարնան փորձով: Ահա որինակ.—

Անցյալ տարի Մատվեն-կուրդանսկի ուսյոնը, չնայելով ուշ գարնանը, նորմալ ժամկետերում ավարտեց հացահատիկային կուլտուրաների ցանքը և մինչև մայիսի 5-ը վերջացրեց բոլոր շարքաների կուլտուրաների ցանքը: Այս հաղթանակը ձեռք բերվեց կոլտնտեսութայն բրիգադներում կատարված որ ու գիշերվա աշխատանքների շնորհիվ: Լըծկանը վոչ միայն չէր քայքայվում, այլ և ավելի առողջ էր, քան ամբողջ որ ու գիշերվա աշխատանքներ կատարելուց առաջ:

Բրիգադներում աշխատանքն սկսվում էր առավոտյան ժամը 3-ից և շարունակվում էր մինչև առավոտյան ժամի 8-ը: Դրանից հետո ընդհատում էր լինում ձիերին կեր տալու և ջրելու համար: Առավոտյան ժամը 9 նորից սկսվում էր աշխատանքը և ցերեկվա ժամը 12-ից—նորից ընդհատում է արդեն 2 ժամով: Յերեկվա ժամը 2-ից աշխատանքը շարունակվում է մինչև յերեկոյան ժամի 6-ը և մեկ ժամ ընդհատումից հետո աշխատանքը շարունակվում էր մինչև գիշերվա ժամի 11-ը: Ժամի 11-ից մինչև առավոտյան ժամի 3-ը—հանգիստ և ձիերի կերակրում, հետո նորից սկսվում էր աշխատանքը:

Մատվեն-կուրդանցիների անցյալ տարվա այս փորձը պետք է անպայման ոգտագործել կոլտնտեսական յերրորդ ցանքի ժամանակ: Յեթե արտադրական խորհրդակցություններն և բոլոր կոլտնտեսականները մի լավ մտածեն, ապա հնարավոր է, վոր նրանք մշակեն լծկանի ոգտագործման ավելի լավ ծրագիր:

Պետք է առաջուց պատրաստվել ամբողջ որուգիշերվա աշխատանքներին:

Կենդանի լծկանն ոգտագործելու մասին պետք է լավ մտածեն նաև այն կոլտնտեսությունները, վորոնք սպա-

նարկվում են մեքենա-տրակտորային կայաններով: Լիակաուար բեռնվածությամբ պիտի աշխատեն վոչ միայն տրակտորներն, այլ և բոլոր լծկան անասունները:

Կենդանի լծկան ուշժի ոպորտունիտատական թերադնահատությանը պետք է բոլլեիկյան հակահարված տալ: Աշնանը և անցյալ դարնանն այդպիսի թերադնահատումը մեծ չարիքներ պատճառեց մի քանի կոլտնտեսություններին:

Ձին ու յեզն առայժմ կոլտնտեսական արտադրության հիւժն են:

Դասակարգային թշնամին, կուլակը լավ է հասկանում այս բանը, ուստի կոլտնտեսական շինարարության վրա հօրձակվելիս նա իր հարվածն ուղղում է դեպի կոլտնտեսությունների կենդանի լծկան ուշժը: Կուլակային թափթփուկ մնացորդները դեռևս վոչ բավականաչափ զիտակից կոլտնտեսականներին մեջ ազիտացիա յեն մղում այն մասին, վոր իբր թե ձին ու յեզն արդեն անպետք են և վոր տրակտորը փոխարինում է նրանց: Դասակարգային թշնամուտորը փոխարինում է նրանց: Դասակարգային թշնամու այսպիսի փորձերը պետք է խեղդել իր բնում: Մենք դեռ աշակիսի փորձերը պետք է խեղդել իր բնում: Մենք դեռ չունենք բավականաչափ քանակությամբ տրակտորներ: այս պատճառով ձին ու յեզն մեծ տեղ են բռնում կոլտնտեսական արտադրության մեջ: Ուրեմն պետք է մեծ հոգատարություն ցույց տալ դեպի կենդանի լծկան ուշժը: Սիրով պիտի վերաբերվել ձիուն և յեզան, պատրաստ պահել նրանց՝ կոլտնտեսական յերրորդ դարնան մարտական խընդիրներն իրագործելու համար:

### ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՊԱՅԵԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԸ

Սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը լայնորեն ընդգրկեցին մեր գործարաններն ու ֆաբրիկաները և այստեղից անցան խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների դաշտերը: Սոցիալիստական մրցությունը բարձրացնում է աշխատանքի արտադրողականու-

Թյունն և լավացնում նրա վորակը: Որինակ, Պլատնիրով-  
սկայա գյուղի կոլտնտեսութեան մեջ անցյալ տարի, բեր-  
քահավաքման ժամանակ, յերկրորդ բրիգադան մրցում եր  
յերրորդի հետ: Պայմանագիրը մրցող կողմերին պարտավո-  
րեցնում եր պահպանել աշխատանքային ամուր դիպիսլի-  
նա, գործավարձի հիմունքով ճիշտ կազմակերպել աշխատան-  
քը: Յերկրորդ բրիգադան, կատարելով այս պահանջները,  
մարդկանց հարյուր տոկոսով դուրս բերեց աշխատանքի,  
վերջնականապես վերացրեց գործալքումները և պարա-  
պուրդները: Վեց ուժանոց կախիչը մի հերթով կալսում եր  
մինչև 115 ցենտներ, հացահատիկ:

Ընկ. Ստալինը կուսակցութեան 16-րդ համագումարում  
սոցիալիստական մրցութեան մասին հետևյալն ասաց.—  
«Մրցութեան մեջ ամենամեծանախնայն ե, վոր նա արմա-  
սական հեղափոխում ե մտնում աշխատանքի վերաբերմամբ  
հարդկանց հայացքներում, բանի վոր նա աշխատանքը ամա-  
քայի յեվ ծանր լծից— ինչպես նա համարում եր առաջ,— վեր  
ե ածում պասվի, փառքի, արտիստութեան յեվ հերոսութեան  
գործի»: Ահա թե ինչ ե պատմում անցյալ տարվա մասին  
Յեյակի ռայոնի «Կարմիր պարտիզան» կոլտնտեսութեան բրի-  
գադի Սալովը:

— Ամա որբեր եյին հա: Ենպես լավ եմ հիշում, վոնց  
վոր յերեկ պատահած ըլիր: Տորեն եյինք հնձում: Ուժերու  
չափում եյինք Մասլոկովայի բրիգադայի հետ: Այսինքն  
յերրորդ բրիգադը մրցում եր չորրորդի հետ: Նրանք հունձ  
եյին անում խորհունտեսութեան կողմից, իսկ մենք հենց դեռ ու  
դեմ եյինք գնում— գեղի կողմից: Իրար պիտի հասնեյինք  
հենց Պողկուրկայի մոտ (մեզանում եր տեսակ դեռ կա):  
Աշխատեցինք 9 որ, համարյա թե առանց դադարի, արևա-  
ծագրից մինչև ուշ իրիկուն: Սիմոն Կլիմենկոն, այսինքն իմ  
ողնականը, ամեն որ, մեկ ել տեսար ձի նստեց ու զնաց  
Մասլոկի մոտ, վոր տեսնի, թե նրանց գործը վոնց ե ա-  
ռաջ գնում: Սիմոնը գալիս ե, իսկ տղերքը շրջապատում են  
նրան:

— 2<sup>ր</sup>ը, վոնց ե:

— Տղերք— ասում ե Կլիմենկոն— Մասլոկին առաջ ե  
անցնում, դեհ, ձեզ մատաղ, վրա տվեք:

Յեվ մենք վրա յեյինք տալիս:

Տասներորդ որվա իրիկունը մենք հասանք Պողկուրկին,  
Դեմ ու դեմ յերրորդ բրիգադն եր: Նրանք ել, ենպես, ելի,  
վերջացնում եյին: Բայց մեր ու նրանց միջև կար չհնձած  
մի կտոր, կլիներ 10 հեկտար: Ես մասը պիտի հնձեր յեր-  
րորդ բրիգադան: Նրանք ասում եյին, թե եզ կտորը մեր  
բրիգադայինն ե: Հենց ետեղ ել վեճ առաջացավ, թե ով  
կհաղթի:

Յերեկվա շողն անցավ: Ձով իրիկուն եր: Մութն եր:  
Տղերքը բեզարել եյին: Վոմանք զնացին հանգստանալու,  
վոմանք ել պառկեցին հենց դեպերի մեջ: Յերրորդ բրիգա-  
դան ել պառկեց քնելու: Մալոջն ել չհամբերեց.—

— Տղերք ջան— կանչեց նա— մի՛թե ամթով պիտի  
քնանք: Հապա, ովքեր են հարվածայինները, թող ետեղ  
գան:

Բոլորն ել հավաքվեցին: Մեկը գերանդին ե վերց-  
նում, մյուսը ձիերի մոտ վաղում, յերրորդը— մեքենաների  
մոտ: Կես ժամից հետո աշխատանքը յեռում եր: Ուշ գիշերին  
են չհնձած կտորն այլևս չկար, ասես կուլ եր տրված: Են-  
տեղ, մերկ հողի վրա դեղ-դեղ կանգնած եր հնձած ցորենը:

Բրիգադի Սալովի այս պատմութեանը մի ավելորդ  
անգամ հաստատում ե ընկ. Ստալինի խոսքերն այն մասին,  
թե հիմա հարվածային աշխատանքը պատվի, փառքի, ա-  
ռաքինութեան ու հերոսութեան գործ ե:

Այժմ, բոլորիկուն յերրորդ գարնան շեմքին, մեր յեր-  
կրամասի կոլտնտեսականները նույնպես պետք ե իրենց  
ամբողջ աշխատանքը կատարեն սոցիալիստական մրցու-  
թեամբ և հարվածայնութեամբ: Դաշտ դուրս գալուց առաջ  
բրիգադներն ստանում են պլան-նարյադներ զաշտային աշ-  
խատանքների համար: Ո՞վ լավ կկատարի առաջադրու-  
թյունը, ով ավելի շուտ կվերջացնի այն, ով առաջինն ար-

ժանի կլինի բոլշևիկյան դարնան պատվավոր հարվածայինի կոչումին—անա հարցեր, վորոնք պետք է խորապես հետաքրքրեն բոլոր կոլտնտեսականներին, բոլոր բրիգադիւններին: Յուրաքանչյուր բրիգադա հենց այժմ պետք է սոցիալիստական մրցության պայմանագիր կնքի մի ուրիշ բրիգադայի հետ: Վորպեսզի մրցումը չլինի դատարկաբանություն, վորպեսզի նրան իսկապես վերածել առաքինության ու փառքի գործի,—պայմանագրում պետք է մանրամասն ցույց տար, թե ինչ բանի համար են մրցում բրիգադները: Իսկ մրցել հարկավոր է ամենից առաջ պլանները կատարելու և գերտկատարելու համար, ագրոտեխնիկական միջոցառումները կիրառելու, անասուններին լավ խնամելու, հարյուր տոկոսով աշխատանքի դուրս գալու, սերմացուն և վառելանյութը անտեսելու, աշխատանքի վորակի և արագության համար:

Սոցիալիստական պայմանագիրն անպայման պիտի ստուգվի: Նրանք, վորոնք պայմանագիր են կնքել և չեն ստուգում այդ պայմանագրի կատարումը, վոչինչ չեն տալիս պայմանագրից, ի չիք են դարձնում մրցության նշանակութունը, ջուր են լցնում դասակարգային թշնամուկուրակության սրոչերի ջրադացին: Մրցության հետևանքով հայտնաբերված հարվածայիններն ու առաջավոր բրիգադները պետք է պարգևատրվեն և արձանագրվեն ինչպես ամենալավ մարտիկներ՝ կոլտնտեսութունների ամրապնդման ասպարիզում, ինչպես սոցիալիզմի լավագույն կառուցողներ Ամեն մի կոլտնտեսության մեջ պիտի լինեն հարվածային խմբակներ և ողակներ:

Ամբողջ աշխատանքը տանել սոցիալիստական մրցությամբ, այդ նշանակում է, վոր կոլտնտեսականները պետք է մրցեն իրար հետ, իրար մեջ անհատական պայմանագրեր կնքեն և հարվածայնորեն կատարեն այդ պայմանագրերը: Գութանավորը պետք է մրցի գութանավորի հետ, ցանվորը — ցանվորի հետ, լուծ քոզը — լուծ քոզի հետ և այլն:

Ահա թե ինչպես եր կազմակերպված անհատական մրցումը Տարասովսկու ռայոնի Տարասովսկայա գյուղի ճիլիչի պատգամները կոլտնտեսության մեջ: Այստեղ աշնանավարը կատարելիս բոլոր գութանավորները մրցում էին իրար հետ: Ութերորդ բրիգադայի առաջին գութանը, վորին սպասարկում էին գութանավոր Նիկոլա Գուլանսկին և լուծ քոզ Միխայիլ Գուլանսկին, մրցում եր յերկրորդ գութանի հետ, վորին սպասարկում էին Չուբիչն և Սվիշչևը: Հոկտեմբերի 25-ին առաջին գութանը մշակեց մեկ ու կես հեկտար, իսկ յերկրորդը — 1,96 հեկտար: Գուլանսկիները, տեսնելով իրենց յետ ֆալը, ուժերը հավաքեցին և մյուս որը մշակեցին յերկու հեկտար:

Մրցության շնորհիվ կոլտնտեսականներ Կոնդրատ Գալուշկինը և Պավել Գորբատովը հսկայական հաջողության հասան և հոկտեմբերի 17-ին նրանք յերկու խոփանի գութանով մշակեցին 2,54 հեկտար: Ահա թե սոցիալիստական մրցումն ինչ դեր է խաղում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործում:

Կոլտնտեսութունների վարչութունները, կուսակցական ու կոմյերիտական բլիշը պետք է լինեն մրցության նախաձեռնողներն ու ղեկավարները: Մասնավանդ այստեղ մեծ դեր ունի յերիտասարդությունը: Նա պետք է պատվավոր տեղ ունենա սոցիալիստական մրցության մեջ, վորպես հարվածայնության նախաձեռնող:

Հավազույն բրիգադները, լավագույն կոլտնտեսականները, վորոնք կատարում են սոցիալիստական պայմանագրերով նախատեսված իրենց պարտավորութունները, ստանում են հարվածայինի կոչում: Հարվածայիններ, դուք պետք է ամուր և բարձր բունք հարվածայնության դրոշմ, բոլշևիկյան յերբորդ գարնան դրոշմ:

Իսկական սոցիալիստական մրցումը, իսկական հարվածայնությունը նաև նրանումն է կայանում, վոր ցանքը կամ վարն ավարտած լավագույն բրիգադան բուկսիբի վերց-

նե յետամնացներին և ոգնի նրանց՝ իրենց առաջադրու-  
թյունները նույնպես ժամանակին կատարելու համար: Սո-  
ցիալիստական փոխադարձ ոգնութեան լայն ծավալմամբ  
կոլտնտեսականները պիտի կարողանան կատարել ու գերա-  
կատարել կոլտնտեսական յերրորդ զարնան պլանները:

**ZUSOՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ**

Կոլտնտեսականների մեջ կատարվելիք մասսայական  
աշխատանքը չսփառանց մեծ քաղաքական նշանակութուն  
ունի: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր յեթե կոլ-  
տնտեսականը ճիշտ պատկերացնի իր առջև կանգնած խըն-  
դիրները, սրանց նշանակութունը թե կոլտնտեսութեան և  
թե պետութեան համար, ապա նա սնապաման ավելի լավ  
և հարվածայնորեն կաշխատի:

Ճիշտ և լայն ծավալված մասսայական աշխատանքը  
կոլտնտեսականներից միշտ առաջ է քաշում ամենաակտիվ,  
գիտակից մարտիկներ սոցիալիստական շինարարութեան  
համար: Ուստի կոլտնտեսութեան մեջ ամեն մի արտադրա-  
կան աշխատանքի հետ (լինի դա ցանքի նախապատրաս-  
տութուն, թե հենց ցանքը, բերքահավաքը, կալսը և այլն)  
պետք է կատարվի նաև լայն ծավալված մասսայական աշ-  
խատանք:

Այժմ, պատրաստվելով բոլշևիկյան յերրորդ զարնանը,  
պետք է կոլտնտեսականներին բացատրել այդ զարնան—  
հնգամյակի ավարտական տարվա զարնան առանձնահա-  
տուռ նշանակութունը: Ամեն մի կոլտնտեսական պետք է  
հասկանա, վոր ցանքի լավագույն կատարումը կոլտնտեսու-  
թյունների կազմակերպչական-տնտեսական հաջող ավար-  
պնդման լավագույն գրավականն է: Վորքան լավ պատ-  
րաստվես զարնան, այնքան արագ և լավ կցանես: Յեկ քա-  
նի վոր լավ և արագ կցանես, ուրեմն լավ բերք կհավաքես:  
Վարքան լավ լինի բերքն, այնքան ուժեղ կլինի կոլտնտե-  
սությունն, իսկ վորքան ուժեղ լինի կոլտնտեսությունն,  
այնքան շատ յեկամուտ կունենա, այնքան ուժեղ կլինի  
պրոլետարական պետությունը:

Ամեն մի կոլտնտեսական պետք է հասկանա, վոր  
սերմացուն, մեքենաները, լծկանը, կերը, աշխատանքի ճիշտ  
կազմակերպումը, դործավորձը—այդ բոլորը զարնանացա  
նին պատրաստվելու առանձին, շատ կարևոր ողակներն են:  
Այս պատճառով ցանքին պատրաստվելու հետ միասին պետք  
է կատարել յետուն, բացատրական աշխատանք: Ամեն մի կոլ-  
տնտեսական պարսավոր է գիտենալ Համառուտական Կենտ-  
դորձկումի վերջին նստաշրջանի վորոշումները—մանավանդ կոլ-  
տնտեսություններում աշխատանքը կազմակերպելու մասին—  
յերկրային և համամիութենական կուսակցական կոնֆերեն-  
ցիաների վորոշումները: Կոլտնտեսականը պետք է խորը  
մտածե այդ վորոշումների մասին, այն մտտին, թե ինչպես  
կատարել նրանց իր գործնական աշխատանքի ընթացքում:

Վան այնպիսի մարդիկ, վորոնք ջուր լցնելով դասա-  
կարգային թշնամիների, կուլակային պոչերի ջրաղացին,  
աշխատում են խուսափել մասսայական աշխատանքից: Իը-  
րանք աջ ոպորտունիստներ են, վորոնք թերագնահատում  
են մասսայական աշխատանքի նշանակութունը: Նրանք  
ասում են՝ «Մեր ինչի՞ն է պետք այդ մասսայական աշխա-  
տանքը, մենք առանց նրան ել յոլա կգնանք»:

Ճիշտ է դա: Իհարկե վոչ: Կանսակու ռայոնի Ձելբաս-  
սկի գյուղի կոլտնտեսութեան մեջ անցյալ տարի հասկա-  
վոր կուլտուրաների կալսը ձգձգվեց մինչև ուշ ձմեռ հենց  
միայն այն պատճառով, վոր կուլակային գործակալների  
ազդեցութեան տակ ընկած կոլտնտեսականներն աշխատան-  
քի չեյին գնում: Նրանք չեյին հասկանում հացամթերումնե-  
րի նշանակութունը ու կարևորութունը, չեյին հասկա-  
նում, վոր կալսի ձգձգումը կարող է վիժեցնել կոլտնտեսու-  
թեան տնտեսական կարողությունը:

Այդ բոլորը տեղի ունեցավ այն պատճառով, վոր կու-  
լակային ագիտացիային չհակադրվեց մասսայական բացա-  
տրական աշխատանքը, վոր կոլտնտեսութեան ղեկավարներն  
ոպորտունիստորեն թերագնահատում եյին այդ աշխատան-  
քի նշանակութունը: Իսկ հարևան Միգուտի գյուղի կոլ-

տնտեսութեան մեջ բոլոր տնտեսա-քաղաքական կամուս-  
 նիաներն անցկացվեցին մարտական կերպով, վորովհետև  
 այնտեղ մասսայական աշխատանքի վրա տառնձին ուշա  
 դրութեան եր դարձվում:

Երձիթ-ընթերցարանները, բրիգադաների կարմիր ան-  
 կյունները—սրանք բոլորն այժմ պետք է մորիլիզացիայի  
 յենթարկվեն դարնանացանին հարվածայնորեն պատրաստ-  
 վելու համար: Զրույցները, համապատասխան կինո-նկար-  
 ները, ղեկուցումները, լրագրերի և հանդեսների ընթերցու-  
 մը, կարմիր և սև տախտակներն—այս բոլորը պետք է ոգ-  
 տագործի դարնանացանի նախապատրաստութեան համար:

Ուշադրութեան դարձնելով սերմացուներին, մեքենա-  
 ների հարվածային վերանորոգման, լծկան ույժի լավա-  
 դույն խնամքին և այլն,—մասսայական աշխատանքի ըն-  
 թացքում պետք է նաև ուշադրութեան դարձվի հասարա-  
 կական սննդին: Անցյալ դարնան վորձը ցույց տվեց, վոր  
 լավ կազմակերպված հասարակական սնունդը հաճախ վճռո-  
 դական դեր եր խաղում ցանքային պլանները կատարելու  
 համար: Շատ կոլտնտեսութեաններում ու բրիգադաներում  
 հենց իրենք, կոլտնտեսականները, դեռևս դաշտ յեկնելուց  
 շատ առաջ, կազմակերպում եյին մթերքների—գետնախըն-  
 ձորի, յուղի, բանջարեղենի, մսի հավաքումը: Այդ բոլորը  
 տանում, հավաքում եյին վորոշ տեղում: Այդպիսով բրի-  
 գադան վաղորոք ապահովված եր լինում դաշտային աշխա-  
 տանքների ժամանակ անհրաժեշտ սնունդով:

Կոլտնտեսականներն առաջուց պետք է նշանակեն խո-  
 հարարուհիներ ու խոհարարներ: Նրանց մեջ ևս պետք է  
 մասսայական աշխատանք կատարել: Նրանց պետք է բա-  
 ցատրել, վոր համեղ և ժամանակին պատրաստված ճաշը  
 նույնպես կնպաստե ցանքային պլանների կատարման:

Կոմունիստ-կոլտնտեսականներն առաջին հերթին պա-  
 տասխանատու յեն մասսայական աշխատանքի համար: Իրի-  
 դադներում ամբողջով կուսակցականները պարտավոր են  
 կոլտնտեսականներին մեջ արտադրական մարտական տրա-

մադրութեան ստեղծել: Նրանց բուլեիկյան պարտականու-  
 թեանն է՝ բրիգադաներում ուժեղ թափ տալ մասսայական  
 աշխատանքին, վորովհետև միայն այս պայմանով է, վոր  
 ամեն մի կոլտնտեսական կհասկանա և կկատարի իր առաջ  
 լրված խնդիրները:

Կոմունիստները պետք է լավադույն աշխատանքի  
 որինակներ ցույց տան, լինեն ամենալավ հարվածային-  
 ները և անձնական որինակով ենտուզիազմ վառեն բրիգա-  
 դայի ամբողջ արտադրական կուլեկտիվի մեջ:

Մասսայական աշխատանքի օսպարիզում պատվավոր  
 դեր ունի կոլտնտեսական մամուլը—բազմատիրաթ թերթե-  
 րը, պատի լրագրերն ու նրանց գյուղթղթակիցները: Մըր-  
 ցելով համամիութենական մրցանակաբաշխութեան մեջ ա-  
 ոսջնութեան ձեռք բերելու համար, մամուլի հարվածային-  
 ները պարտավոր են հոգալ դարնանացանի հաշտութեան  
 մասին, վորը և կլինի նրանց մրցութեան կարևորագույն  
 ցուցանիշը:

Ի՞նչ խնդիրներ պիտի իրագործեն գյուղթղթակից-  
 ները: Ի՞նչպես պիտի նրանք ոգնեն կուսակցութեանը՝  
 կազմակերպելու և համախմբելու կոլտնտեսականների ամե-  
 նալայն մասսաներին՝ կոլտնտեսական յերրորդ դարնան  
 պլանի համար բուլեիկորեն պայքարելու:

Նախ՝ յուրաքանչյուր գյուղթղթակից և այն լրագիրը,  
 վորտեղ նա գրում է,—պետք է ջանջախեն օգորտունիստ-  
 ների ամենաչնչին փորձերը՝ մասսայական աշխատանքը  
 վարչական չոր ու ցամաք կարգադրութեաններով փոխա-  
 րինելու: Պետք է աշխատել, վոր ամեն մի կոլտնտեսական  
 և կոլտնտեսուհի պարզ հասկանան դարնանացանի հսկայա-  
 կան նշանակութեանը, վորպեսզի նրանք պատրաստվեն  
 դարնանացանին՝ վորպես կոլտնտեսութեանների կազմա-  
 կերպչական-տնտեսական ամբապնդման պայքարի վճռական  
 ետապին: Իսկ այս նշանակում է, վոր կոլտնտեսական լրա-  
 գրերն ու գյուղթղթակիցները պարտավոր են հետևալը

կատարել, մասսայական աշխատանքի բոլոր ձևերի միջոցով նրանք պետք է մրցությանն ու հարվածաձայնությանը ներգրավեն ինվենտարի վերանորոգման բոլոր վարպետներին, բոլոր ձիապաններին, բոլոր կոլտնտեսականներին, վորոնք զբաղված են ցանքի նախապատրաստության աշխատանքներով:

Բազմատիրած թերթերը, պատի թերթերն և գյուղթղթակիցների հարվածային բրիգադները պետք է շեփություն վերցնեն առանձին ախոռների, արհեստանոցների, սերմազտման բրիգադների վրա: Պետք է աշխատել, վոր այս յենթաշեփերն իսկապես որինակելի գործ կատարեն և յետամնացները հավասարվեն առաջավորներին:

Պետք է կազմակերպել գյուղթղթակիցների բրիգադներ՝ բոլոր նախապատրաստական աշխատանքներն ստուգելու համար: Հենց վոր մի վորև տեղում նկատվեն աշխատանքի ցածր տեմպեր, պետք է իսկույն և յեթ բարձրացնել այդ տեմպերը: Հսկողության տակ առնել բոլոր նախապատրաստական աշխատանքներն—ահա մամուլի հարվածայինների խնդիրը:

Կոլտնտեսական յերրորդ գարնան պլանների համար մղվող պայքարից հաղթող դուրս գալու նպատակով, անհրաժեշտ է կոլտնտեսականների ամուր միաձուլությունն ու հասարակական բարձր գիտակցությունը: Մամուլի հարվածայիններն, ինչ կերպ էլ լինի, պետք է կռնն ու կոփեն այդ բարձր գիտակցությունը:

Կոլտնտեսական լրագրերի ու նրանց գյուղթղթակիցների պարտականությունն է կազմակերպել կոլտնտեսությունների կողմից գարնանացանին նախապատրաստվելու ստուգատեսը:

Իսկ դաշտային, աշխատանքների ժամանակ, յիրը կսկսվի ցանքային գրոհը, մամուլի հարվածայինները պետք է ջանք թափեն, վորպեսզի աշխատանքների տեմպերը լինեն բարձր, վորպեսզի սչակույթի նորմաներն և որական

առաջադրությունները կատարվեն ու գերակատարվեն: Կոլտնտեսությունները պետք է ցանքն անեն 10—15 որում, քանի վոր այդպիսի ժամկետներն են բարձր բերքավության յերաշխիքները:

Կոլտնտեսական յերրորդ գարնան խնդիրը հնգամյակի յորրորդ ու վերջին տարվա խնդիրն է: Ուրեմն ցանքային պլանը պետք է կատարվի ամբողջովին նորմալ ժամկետերում:

Այդ բանը հաջողեցնելու համար հարկավոր է վճուհանապես կիրառել ընկ: Մտալինի վեց պայմանները, վորոնք պարտավորեցնում են—

—Ամրապնդել գործավարձը, վերջնականապես վերացնել «հավասարեցումն» ու դիմադրկությունը, պատրաստել կոլտնտեսական արտադրության վորակյալ կազրեր:

—Ճիշտ դասավորել ուժերը: Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է բեռնված լինի աշխատանքով: Կոլտնտեսության ավերորդ բանվորական ույժը պլանային կարգով պետք է տալ արդյունաբերության:

Յանքային գրոհի հաջողությունը—դա հնգամյակի վերջին տարվա հաջողությունն է, դա սոցիալիզմի վճուհան հարվածն է կապիտալիզմին:

Միլիոնավոր կոլտնտեսականների բուլբուլային գրոհով պայքարենք այդ հաջողության համար, ճշտորեն կատարենք ընկ: Մտալինի վեց ցուցմունքները, մաքրենք ճանապարհը կուլակային պոչերից և ասեն տեսակ ոպորտունիստներից:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	59
1. Արտադրական-ֆինանսական պլանը . . . . .	1
2. Պատերազմ դիմադրկության դեմ . . . . .	8
3. Դաշտերում ճիշտ կազմակերպել աշխատանքը . . . . .	10
4. Վորակը կարևորագույնն է . . . . .	13
5. Լավ աշխատանքը լավ գնահատել . . . . .	14
6. Ոգտագործել հարևանի փորձը . . . . .	17
7. Վերն է հառաջատվական գործավարձի հիմքը . . . . .	18
8. Կրկնապատկենք, յեռապատկենք կոլեկտիվական դաշտերի բերքը . . . . .	21
9. Յեթե յեղանակը թույլ տա, ձմեռն էլ վարիք . . . . .	25
10. Կուլտուրաները հերթով պիտի ցանել . . . . .	27
11. Ավելի մեծ հողատարություն մեքենաներին . . . . .	31
12. Սոցիալիստական հաշիվ վերանորոգման վարպետներին . . . . .	33
13. Մաքուր սերմացու ցանենք . . . . .	37
14. Կովել լծկանի նիհարության դեմ . . . . .	40
15. Ավելի բարձր պահել սոցմրցության և հարվածայնության դրոշը . . . . .	45
16. Հատուկ ուշադրություն մասնայական աշխատանքին . . . . .	50

Ответственный редактор  
А. Г. Авакиан  
Технический редактор  
А. Г. Мазманян

№ 2068  
1932 г.

Сд. в набор 26/1—1932 г.  
Сд. в печать 4/1—1932 г.  
Объем 134 печ. листа  
Тираж 2000 экз.

«Ազգային գրադարան»



NL0282232

С. Х. О.

15618

6.1.90 =

68/1

0770



На армянском языке

А. Л. МОРГУЛИС  
Д. ЮДИН

НАВСТРЕЧУ ТРЕТЬЕЙ  
КОЛХОЗНОЙ ВЕСНЕ

Из-во «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՄԱՍԿՈՎԱՅԻ ՓՈՂ. 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)